

## ՄԸՔՏԱՏ ՄԵԿՆԱԲԱՆԵՅՑ ՍՈՒՐԻՈՅ ԸԱՐԻՒՂԸ ԲԱԺՆԵԿՅԵՆՈՒ ԷՐՏՈՂԱՆԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Երեքշաբթի, 19 Եպրիմբեր 2019-ին, Դամասկոսի մեջ Ինտոնեսիոյ անկախութեան 74-ամեակին առիթով Ինտոնեսիոյ դեսպանատան կազմակերպած հանդիսութեան շրջագիծէն ներս, Սուրիոյ արտաքին գործոց փոխնախարար Ֆայսալ Մըքտատ յայտնեց, որ Սուրիա թոյլ պիտի չտայ, որ օտար ուժեր թալանեն սուրիական քարիւղը, իսկ ԱՄՆ եւ արեւմտեան պետութիւններ պետք է լաւ իմանան, որ Սուրիոյ ժողովուրդը, ուշ կամ կանուխ, իւրաքանչիւր գրաւուած ապա ազատագրուած տարածք պիտի վերականգնէ:



Մըքտատի համաձայն, գարմանալի չէ որ արեւմտեան պետութիւններ կը յանդիմանան նման նիւթեր քննարկել Էրտողանի հետ: Անոնք լաւ գիտեն, որ Էրտողան դաւաճան է եւ բարոյականութեան Նուազագոյն սկզբունքներն իսկ չունի:

Իտլիայի մեջ գիտնորական գործողութիւններուն ակնարկելով Մըքտատ ըսաւ. «Իտլիայի պատերազմը սկսած է այն վայրկեանէն, երբ ահաբեկիչները, թուրքերն ու արեւմտեան պետութիւնները փորձեցին Իտլիայի եւ այլ քաղաքներու մէջ իրենց գիտնորական ներկայութիւնը հաստատել: Սուրիացի ժողովուրդը, սուրիական բանակն ու անոր դաշնակից ուժերը ջանք պիտի չխնայեն թշնամին Սուրիայէն վանելու եւ սուրիական գրաւուած տարածքները վերականգնելու»:

Մըքտատ յայտնեց, որ Սուրիոյ եւ կարգ մը պետութիւններու ներկայացուցիչներուն միջեւ հեռաձայնային հաղորդակցութիւններ տեղի կ'ունենան դեսպանատուներու վերաբացման շուրջ: Այս ծրագիրը ի գործ պիտի դրուի 2020-ի սկիզբը:

## ԼԱԹԱՔԻՈՅ Ս. ԱՏՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՅ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ՕՐԶՆԱԲԵՐ ՏՕՆԸ

Լաթաքիոյ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ անուանակոչութեան տօնին առիթով, ընկալեալ սովորութեան համաձայն, Բերիոյ Դայոց Թեմի ծովափընցայ շրջանի հայութիւնը տօնական օրեր կ'ապրի: Առաջնորդ Սրբազան Դայոց կը հանդիսապետ տեղի ունեցող արարողութիւնները եւ տօնախմբու-



թիւնները: Ստորեւ, ժամանակագրական ձեւով կը ներկայացուի Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Սրբ. Եպս. Զօպուեանի Թարթուս ու Լաթաքիա հովուական անդրանիկ այցելութեան նկարագրականը:

### ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆ ԴԱՅՐԸ ԹԱՐԹՈՒՍ ԺԱՄՆԵՑ

Յինգշաբթի, 14 Եպրիմբեր 2019-ին, երեկոյեան ժամը 5:00-ին, Բերիոյ Դայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Սրբ. Եպս. Զօպուեան յատուկ պատուիրակութեամբ ժամանեց Թարթուս: Սրբազան հօր ընկերակցեցան Ազգ. Վարչութեան ժողովի անդամներ ատենապետ Յարութ Զիլիպեան, ատենադպիր Դուրի Ապահունի-Պօշկեզէնեան եւ Կրօնական ժողովի անդամ Խորեն Զինյ. Պերթիզէան: Առաջնորդ Սրբազան Դայոց պաշտօնապէս դիմաւորուեցաւ շրջանի Դայ Կեդրոնին մէջ, Լաթաքիոյ եւ Թարթուսի հոգեւոր հովիւ Արժ. Տ. Վազգէն Զինյ. Զեօշկերեանի, Լաթաքիոյ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Թաղական Խորհուրդի ատենապետ Անտիս Կարպուշեանի, Թարթուսի Թաղական Խորհուրդի ատենապետ Տրդատ Զեշիշեանի եւ մնացեալ անդամներուն կողմէ:

### ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆ ԶՕՐ ԱՆԴՐԱՆԻԿ ԱՅՑԵՆՈՒԹԻՒՆԸ ԹԱՐԹՈՒՍ

Ուրբաթ, 15 Եպրիմբեր 2019-ին, առաւօտեան ժամը 10:30-ին, Թարթուսի Յոյն Ուղղափառ Դամայնքի Մար Տանիէլ Եկեղեցւոյ մէջ Ս. եւ Անմահ Պատարագ մատուցուեցաւ: Արարողութեան հանդիսապետեց Բերիոյ Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Սրբ. Եպս. Զօպուեան: Պատարագիչն էր Արժ. Տ. Վազգէն Զինյ. Զեօշկերեան: Ներկայ էին Դալեպէն ժամանած Ազգ. Վարչութեան պատուիրակութիւնը, Թարթուսի եւ Լաթաքիոյ հաւատացեալ-

Խորեն Զինյ. Պերթիզէան  
 Շար. Էջ 5 ➔

## ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Դարերէ ի վեր թշնամիներուն կռուախնձոր դարձած մեր հայրենիքը այսօր իր գոյութիւնը կը վայելէ շնորհիւ իր գաւակներուն ազգային գիտակցութեան, հայրենասիրութեան ու տոկուն նկարագրին:

Վերոնշեալ գործօնները հաստատելու եւ սերունդէ-սերունդ դրոշմելու մէջ յատկանշական դեր ունին մեր լեզուն, հայկական եկեղեցին ու հայ մշակոյթը:

Հայերէնը, հայ գրականութիւնն ու հայկական ազգային ինքնութիւնը մեր պապերէն փոխանցուած ժառանգութիւն են: Այս գանձերը, ի հեճուկս ամէն դժուարութեան, պահպանեցինք, ցեղասպանութեան հետեւանքով սփռուելով մեկտեղ աշխարհի չորս դիւ:

Հայրենիքի մէջ թէ դուրս, Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը իր հիմնադրութեան օրէն նեցուկ կանգնեցաւ հայու ինքնութեան պահպանման: Ան ամէնուրեք ստեղծեց հայեցի դաստիարակութեան մթնոլորտ, առաջը առնելու այլասերման վտանգին: Այս մէկը իրագործեց հայկական դպրոցներ, եկեղեցիներ ու միութիւններ հիմնելով ու պատրաստելով ազգային գիտակցութեամբ զինուած երիտասարդներ:

Հակառակ անոր, որ աշխարհագրական տարբեր վայրեր ու երկիրներ հաստատուած ենք, սակայն դաշնակցականներս նոյն ոգիով ու շունչով սնանած ենք: Խստիւ կը մերժենք ամէն արտայայտութիւն, որ կասկածի տակ կը դնէ մեր միասնականութիւնը: Չկայ ներսի եւ դուրսի դաշնակցութիւն: Դաշնակցութիւնը մէկ է: Դաշնակցականներս՝ բոլորս մէկ ենք: Բոլորս կը հաւատանք նոյն վեհ գաղափարին ու կ'աշխատինք նոյն նպատակները իրագործելու համար:

Քրիստափոր Ուսանողական Միութիւնը գորակա կը կանգնի ՀՀԴ ՀԵՄ-ին: Մենք՝ ԸՈՒՄ-ականներս, ձեր կողքին ենք, ընկերներ՝, միասնաբար պաշտպանելու մեր լեզուն, գրականութիւնն ու հայկական ինքնութիւնը պահող հիմքերը:

Հրաժարականը կը պահանջենք այս արժեքներուն հանդէպ անտարբերութիւն ցուցաբերող նախարար Արայիկ Յարութեան, որուն վարած քաղաքականութիւնը բացայայտօրէն կը սպառնայ հայկական կրթական համակարգին ու գիտութեան, մշակոյթին ու մարմնակրթութեան ապագային:

Թեւ ու թիկունք ենք ձեզի, ընկերներ՝: Թոյլ պիտի չտանք, որ թոյլերը թունաւորեն մեր հայաշունչ մթնոլորտը:

**Քրիստափոր Ուսանողական Միութիւն**

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ուրախութեամբ հաղորդած էինք, որ Բերիոյ Դայոց Թեմի Ազգ. Առաջնորդարանը իր վարչական բոլոր գրասենեակներով 4 Եպրիմբեր 2019-էն սկսեալ արդէն վերադարձած է իր պաշտօնական կեդրոնը՝ Սալիպէ, Սրբոց Զառանից Մանկանց Մայր Եկեղեցւոյ հովանիին ներքեւ:

Ազգ. Առաջնորդարանը բաց է ամէն աշխատանքային օր, առաւօտեան ժամը 8:30-էն 1:30:

Հեռաձայնի թիւերն են՝ 2122756 - 2122758

Շնորհակալութիւն ուշադրութեան համար:

Դիան  
 Ազգ. Առաջնորդարանի



Խմբագրական

ԼԻԲԱՆԱՆԻ ՏԱԳՆԱԿՆ ՈՒ ՍՈՒՐԻԱՆ

Լիբանանի ժողովրդային բողոքի ալիքը ցարդ տեղատուութեան նշաններ ցոյց չի տար:

Բողոքի շարունակուող ցոյցերը կը վկայեն, որ կառավարութեան վերջերս յայտարարած բարեկարգումներու շարքն ալ ժողովուրդին վստահութիւնը չափելու եւ անոր գայրոյթը ներծծելու համար, - յատկապէս կառավարութեան տնտեսական եւ ընկերային քաղաքականութեան գծով, - բաւարար չէ համարուած:

Ըստ քաղաքական վերլուծաբաններու, իշխող վերնախաւին փտածութեան մակարդակը այնքան բարձր է, որ ժողովուրդը աւելի մեծ եւ վճռորոշ քայլեր կ'ակնկալէ երկրի տնտեսական եւ ընկերային կեանքը բարելաւելու համար:

Ժողովուրդին ընդվզումին պատճառը պարզապէս ազգային եկամուտին ոչ-արդար բաշխումը չէ, այլեւ ծառայողական ոլորտին վատ վիճակը, շուրիի ապականումը, փտածութեան սանձարձակ ընդլայնումը եւ այլն: Այդուհանդերձ, կը թուի որ ազգային եկամուտին արդար բաշխումով կառավարութիւնը մեծ ներդրում կրնար բերած ըլլալ երկրի տնտեսութեան: Տնտեսագետներու համաձայն, այս փոքր երկիրը, համեմատած ԱՄՆ-ի եւ Նորվեկիոյ հետ, աւելի մեծ թիւով միլիոններ ունի: Լիբանանի արտաքին պարտքերու բեռին տակ կըստ կը մնայ: Երկրի արտաքին պարտքերուն գումարը հասած է շուրջ 85 միլիարտ տոլարի, ինչ որ ազգային եկամուտին 151 ան հարիւրը կը կազմէ, իսկ պարտքերու տոկոսադրոյթը՝ ազգային եկամուտին 40 ան հարիւրը:

Քաղաքական վերնախաւը փորձած էր խուսանաւում մը կատարել յաղթահարելու պարտքի ճգնաժամը՝ միջին եւ ստորին դասակարգերու եկամտային հարկերու բարձրացման միջոցով, ինչ որ գանգուածային բողոքներու նման ալիք բարձրացուց: Իրականութեան մէջ, հարցը ոչ այնքան հարկերու բարձրացումն էր, որքան անոնց անարդար բաշխումը, նկատի ունենալով որ լիբանանեան ընկերութիւններու եւ արտադրողներու համար սահմանուած հարկերուն համեմատութիւնը աւելի նուազ էր քան սովորական քաղաքացիին եկամուտին հարկը:

Լիբանանի կառավարութեան որդեգրած վերջին բարեկարգումները, ըստ երեւոյթի, անբաւարար են երկրի տնտեսութիւնը վերականգնելու համար: Լիբանանին անհրաժեշտ է տարիներու վրայ երկարող եկամտային աճի տնտեսական յստակ քաղաքականութիւն, տնտեսութեան աշխուժացում՝ առաջը առնելու պետութեան արտաքին պարտքերու գնահին:

Լիբանանեան զարգացումներուն ազդեցութիւնը այդ երկրի սահմաններէն անդին անցնելով կը հասնի նաեւ Սուրիա:

Սուրիական պատերազմի տարիներուն, գաղթականներու բարձրացող ալիքը ողորդած էր Լիբանան-Սուրիա սահմանը, գաղթականներ կ'ուղղուէին դէպի Լիբանան: Այս օրերուն, սակայն, անոնք կրկին կը վերադառնան Սուրիա: Ծատ մը սուրիացիներ կը փութան վերադառնալ իրենց երկիրը, յառաջիկային, - ցամաքային ճամբաներու հաւանական փակումով, - այդ առիթը չունենալու մտավախութենէն մեկնած:

Սուրիա-Լիբանան ցամաքային փոխադրութեան դիմաց ցցուող ներկայ դժուարութիւնները կ'ազդեն Սուրիոյ եւ Լիբանանի տնտեսութեան վրայ, որովհետեւ երկու երկիրներու միջեւ ապրանքափոխանակութեան գլխաւոր ելքը կը համարուի սահմանային միջանցքը: Լիբանանեան դրամանիշին կրած փոփոխութիւնները եւ դրամի փոխանակութեան արգելքները, - դրամատուներուն դիմագրաւած տագնապին բերումով, - կ'ազդեն նաեւ այն սուրիացիներու (վաճառականներ, ձեռնարկատերեր) տնտեսական կարողութեան վրայ, որոնք սուրիական պատերազմի օրերուն մեծագումար իրենց դրամագլուխները սուրիական դրամատուներէն փոխադրած էին լիբանանեան դրամատուներ՝ ապահովական նկատառումներով:

Լիբանան-Սուրիա քաղաքական եւ տնտեսական փոխազդեցութիւնները, սուրիացի գաղթականներուն վերադարձին ունենալիք դրական որոշակի ազդեցութիւնը Լիբանանի տնտեսութեան վրայ եւ երկու երկիրներուն դիմագրաւած քաղաքական ներքին թէ արտաքին մարտահրաւերները անոնց յարաբերութիւններու բարելաւման անհրաժեշտութիւնը կ'ուրուագծեն:

Կը թուի, թէ արաբական աշխարհն ալ, իր կարգին, կը խրախուսէ նման մերձեցում, ինչ որ Սուրիա-Լիբանան տնտեսական դաշտի ապաքինման նոր խթան կրնայ հանդիսանալ:

«Գ.»

-Սուրիոյ նախագահ Պաշար ալ Ասատ հանդիպում ունեցաւ խումբ մը երիտասարդական խմբակներու հետ, որուն ընթացքին շեշտեց սուրիական միջավայրին մէջ երկխօսութեան ընդհանրացման անհրաժեշտութիւնը: Ասատ դիտել տուաւ, որ երիտասարդները իրենց շինիչ գաղափարներով, երկխօսութեան ճամբով կրնան կառավարական հաստատութիւններուն ընթացքը բարելաւող նախաձեռնութիւններ առաջարկել:



-Երեքշաբթի, 19 Նոյեմբեր 2019-ին, ՍԱՆԱ հաղորդեց, որ սուրիական բանակի հակաօդային պաշտպանութեան համակարգերը դէմ դրին երկրին հարաւային շրջաններուն ուղղութեամբ արձակուած խրայէլեան հրթիռներու, աւելցնելով, որ Դամասկոսի Միջազգային Օդակայանին մօտ պայթումի ձայներ լսուեցան:



Միւս կողմէ, «Սփութ-Նիք» լրատու գործակալութեան թղթակիցը յայտնեց, որ սուրիական հակաօդային պաշտպանութեան համակարգերը դէմ դրին Դամասկոսի Միջազգային Օդակայանին ուղղութեամբ արձակուած խրայէլեան հրթիռներուն:

Չիւտուրական աղբիւր մը հաղորդեց, որ հրթիռները արձակուեցան Կուլան-Սուրիա-Լիբանան սահմաններէն: Հրթիռները կ'ուղղուէին Դամասկոսի հարաւային արուարձանին մէջ գտնուող սուրիական զինուորական կէդրոններ, սակայն անոնց մեծամասնութիւնը վար առնուեցաւ:

Չորեքշաբթի, 20 Նոյեմբերին, սուրիական բանակի հակաօդային պաշտպանութեան համակարգերը կրկին դէմ դրին Դամասկոսի ուղղութեամբ խրայէլի արձակած հրթիռներուն, վար առնելով անոնց մեծամասնութիւնը: Արձանագրուեցան 2 գոհ, տասնեակ վիրաւորներ:

-Երեքշաբթի, 19 Նոյեմբեր 2019-ին, ՍԱՆԱ հաղորդեց, որ սուրիական բանակը իր վերահսկողութեան կէդրոնները ընդլայնեց Զասիչէի հիւսիսարեւմտեան արուարձանին մէջ՝ բնակչութեան պաշտպան հանդիսանալու համար: Միւս կողմէ թրքական բանակը եւ անոր ենթակայ զինեալ ահաբեկչական խմբաւորումները կը շարունակեն յարձակիլ Զասիչէի հիւսիսային գիւղերուն վրայ, զուգահեռաբար անոնք Թալ Թամրի եւ Ռաս ուլ Այնի բնակարանները կը թալանեն եւ երիտասարդներ կ'առեւանգեն:



-Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Մելլուք Չաւուշօղլուն յայտարարած է, որ Անգարա կրնայ զինուորական գործողութիւնները վերսկսիլ Սուրիոյ մէջ: Ան յայտնած է, որ նման քայլ կրնան առնել, եթէ Ռուսիա ու ԱՄՆ չյարգեն քրտական զինեալ խմբաւորումները ապահովութեան գօտիէն հեռացնելու իրենց խոստումը:



Չաւուշօղլու ըսած է. «Եթէ արդիւնք չտեսնենք, պիտի դիմենք անհրաժեշտ բոլոր միջոցներուն», սպառնալով վերսկսիլ զինուորական գործողութիւնները Սուրիոյ մէջ:

Յիշենք, որ 17 Յոկտեմբերին Թուրքիոյ նախագահ Ռեճեպ Թայիպ Էրտողանի, ԱՄՆ փոխնախագահ Մայք Փենսի եւ ԱՄՆ պետքարտուղար Մայք Փոմփեյի բանակցութիւններուն համաձայն, Թուրքիա պարտաւորուած էր 120 ժամով դադարեցնել Սուրիոյ հիւսիսային շրջանին մէջ զինուորական իր գործողութիւնները, որպէսզի քրտական ջոկատները ապահովութեան գօտիէն 30 քմ. խորութեամբ հեռանային:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ
«Գանձասար»-ի վարչութիւնն ու խմբագրութիւնը շնորհակալութիւն կը յայտնեն Զայ Աւետարանական Զամայնքի պետ Վերապատուելի Յարութիւն Սելիմեանին, թերթիս հրատարակութիւնը խրախուսելուն եւ «Գանձասար»-ին համակարգիչ մը նուիրելուն համար:



# Լուրեր Հայաշխարհին

## ՀՅԴ ՀԵՄ-Ի ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

8 Նոյեմբերին տեղի ունեցած ճեպագրոյցի ընթացքին Կրթութեան, Գիտութեան, Մշակոյթի եւ Մարմնակրթութեան նախարար Ա. Յարութիւնեան յայտարարեց, որ կը պատրաստուի այն արկղերը, որոնք ցոյցի ընթացքին տարուած էին նախարարութեան դիմաց, լեցնել տասնեակ եւ ավելի քրեական գործերով եւ ուղարկել բողոքի մասնակիցներուն, ատելցնելով, որ խնդրած է համապատասխան մարմիններուն տրամադրել գործերու ցանկերը, որոնցմով կը լեցուին դատարկ արկղերը:



Մենք 11 Նոյեմբերին նամակներ ուղարկեցինք ԿԳՄՍ Նախարարութիւն, ՀՀ ոստիկանութիւն, ՀՀ Գլխաւոր Դատախազութիւն եւ ՀՀ Յատուկ քննչական ծառայութիւն՝ խնդրելով մեզ գրաւոր պատասխանել արդեօք ԿԳՄՍ Նախարարը համապատասխան տուեալներ ստանալու խնդրանքով դիմած է վերոյիշեալ մարմիններուն, թե՛ ոչ: Լրացել է օրէնքով սահմանուած ժամկետը, որ նախատեսուած էր գրաւոր հարցումին պատասխան ստանալու համար: Մենք պատասխան ստացած ենք միայն ՀՀ Յատուկ քննչական ծառայութենէն եւ ՀՀ Գլխաւոր դատախազութենէն՝ առ այն, որ իրենք նման բովանդակութեամբ որեւէ հարցում չեն ստացած ԿԳՄՍ Նախարարութենէն:

Այս փաստը ԿԳՄՍ Նախարարի կողմէն անպատասխանատու եւ խորքային հարցերը շերտաւորելու քաղաքականութեան մէկ վկայութիւնն է:

**ՀՀ Երիտասարդական Միութիւն**

## ՔՐԻՍՏԻՆԷ ՎԱՐՊԱՆԵԱՆ «ՊԱՀԱՆՁՔԸ ՆՈՅՆԵ՛Մ ԱՐԱՅԻԿ ՅԱՐՈՒԹՅՈՒՆԵԱՆԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ»



«Երկիր».- ՀՀ Կրթութեան անդամ Քրիստինէ Վարպանեան Yerkir.am-ի հետ զրոյցի ընթացքին յայտնեց, որ նստացոյցը այսօր առտու կանուխէն կը շարունակուի ԿԳՄՍ Նախարարութեան շէնքին դիմաց, պահանջքը նոյնն է՝ Արայիկ Յարութիւնեանի հրաժարականը, որովհետեւ մեր յարուցած հարցերուն մէջ որեւէ փոփոխութիւն չ'է եղած:

Ան յայտնեց, որ իրենք ոչ թէ որեւէ անձի, այլ վարող քաղաքականութեան դէմ դուրս եկած են, որուն պատասխանատուն Արայիկ Յարութիւնեանն է:

Ստացոյցի մասնակիցները այսօր երեկոյեան ԿԳՄՍ Նախարարութեան շէնքին մօտ ֆիլմի ցուցադրութիւն կազմակերպած են. պիտի ցուցադրուի Նիկոլ Աղբալեանի մասին ֆիլմ, որ կը պատմէ, թէ կարճ ժամանակի մէջ ինչ կարելի է ընել քանդուած պետութեան կրթութեան ոլորտէն ներս:

## ԻՇԽԱՆ ՍԱՂԱՔԵՂԵԱՆ «ԱՅՍ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲՆՆԱԳԱՏՈՒԹԵԱՆ ՎԱՐՓ ԳՆԵՆ»

ՀՀ Գերագոյն Մարմինի անդամ Իշխան Սաղաթելեան Aysor.am-ի թղթակիցին հետ զրոյցի ընթացքին անդրադառնալով նախօրէին Արայիկ Յարութիւնեանի եւ ԵՊՀ դասախօսական կազմի հանդիպումին, ուր նախարարը թոյլ չ'էր տուած կարծիք յայտնել դասախօս Ռիթա Սաղաթելեանին, որ Իշխան Սաղաթելեանի խօսքոյրն է յայտնեց, որ Կրթութեան, Գիտութեան, Մշակոյթի եւ Մարմնակրթական նախարար Արայիկ Յարութիւնեան չ'հասկցաւ ընտանեկան, անձնական, կուսակցական ու քաղաքական յարաբերութիւններու տարբերութիւնը:

«Այս ամբողջ ընթացքին հարցի

բովանդակութեան անդրադառնալու փոխարէն փորձեց անձնաւորել, կուսակցականացնել, պիտակաւորել պայքարը, եւ պետական համալսարանի մասնագետի պարզ հարցումէն իսկ ջղայնացաւ եւ հարցը տեղափոխեց բոլորովին այլ հարթութիւն: Հարցադրոյս կուսակցականչէ, ԵՊՀ-ի մասնագետ, ու ակնհայտ է իր քաղաքացիական դիրքորոշումով, երբ 2018 թուականի գարնան՝ միացած էր իր ուսանողներուն», ըսաւ Իշխան Սաղաթելեան:

Դասախօսներու հետ հանդիպումին, յիշեցնենք, նախարարը ըսած էր, թէ փութածութեան գործընթացը բացայայտելը բաւական

բարդ գործընթաց է, եւ դիմելով ԵՊՀ մասնագետ Ռիթա Սաղաթելեանին, ըսած էր. «Բայց Ձեր եղբոր տղուն



կուսակց ու թիւ նը անպայման կը ստանայ այդ արկղերով քրեական գործերը: Հիմա մենք հարցում ուղղած ենք, կը ստանայ նաեւ պատասխանները»:

Երբ դասախօսը փորձած էր հակադարձել Արայիկ Յարութիւնեանին, վերջինս արձագանգած էր. «Բարի եղէք, լսեցէ՛ք միւսչէն վերջ, եթէ նոյնիսկ Ձեզի փափաքելի չ'ի թուիր եւ Ձեր քաղաքական խումբի ակաւնջներուն հաճելի չ'է»:

Իշխան Սաղաթելեանի խօսքին համաձայն, դժբախտաբար, այս իշխանութիւնները վարժուած չ'են քննադատութեան.

««Նոր Հայաստանի մէջ» գիրքէն քննադատողներուն հետ կը խօսին սպառնալիքով, կը փորձեն վախցնելու միջոցով լռեցնել, բայց չ'են հասկնար, որ գործ ունին Դաշնակցութեան հետ: Մեզ նման ձեւերով չ'են կրնար սպառնալ ու ստիպել, որ հրաժարիք մեր կեցուածքէն: Հերթականօրէն հարցէն շեղելու քայլ է, որ յաջողութիւն չ'ունենար: Ես չ'եմ բացառեր, որ իրենք կը փորձեն ինչ-որ բաներ սարքել, կարելի, վերջինս ու վերագրել ուրիշներու, բայց եթէ այդ սխալը ընեն, ընդհանրապէս այդ ամէն ինչի տակ կը մնան»:

Երբ հարց տրուեցաւ, թէ կարելի է, որ այս կերպ փորձով լռեցնել նախարարի հրաժարականը պահանջող բողոքի մասնակիցները, Իշխան Սաղաթելեան պատասխանեց.

«Դաշնակցութեանը փորձած են լռեցնել կայսրութիւններ, միապետութիւններ, 130 տարի փորձած են ինչ-որ բան ընել, ու այդ հարթակի վրայ, խնդրեմ, պատկերացուցէք, թէ ով է Արայիկ Յարութիւնեանը կամ մնացածը, որ կը փորձեն ինչ-որ բան ընել: Մեր պայքարը անձնական չ'է, մեր երիտասարդները կը պայքարին կրթութեան, գիտութեան ու մշակոյթի ոլորտէն ներս տարուող ապագային քաղաքականութեան դէմ: Այս ընթացքով երբեք որեւէ դաշնակցական չ'է վիրաւորած նախարարը, որովհետեւ սա մեզի համար սկզբունք է»:

## ՆԱԽԱՐԱՐ ԱՐԱՅԻԿ ՅԱՐՈՒԹՅՈՒՆԵԱՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԴԱՍԱԽՕՍՆԵՐՈՒՆ ԵՒ ՄՏԱԽՐԱԿԱՆՆԵՐՈՒՆ ՀԵՏ

«Փանորամա».- Հայաստանի դասախօսներն ու մտաւորականները հանդիպում ունեցան կրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ մարմնակրթութեան նախարար Արայիկ Յարութիւնեանի հետ: Անոնք դժգոհ էին նախարարութեան կողմէ մշակուած «Բարձրագոյն կրթութեան եւ գիտութեան մասին» նոր նախագիծէն, որուն համաձայն, բարձրագոյն ուսումնական հաստատութիւններուն մէջ «Հայոց լեզու եւ հայ գրականութիւն» եւ «Հայոց պատմութիւն» նիւթերու դասաւանդութիւնը պարտադիր պիտի չ'ըլլայ:



«Այսօրիակ քարոզչութեան ճնշող պայմաններուն մէջ վտանգները բացառելու միակ ողջմիտ ճանապարհը, մեր կարծիքով, կը մնայ, որ նոր օրէնքով վերստին ամրագրուի հայոց լեզուի ուսուցման պարտադիր ըլլալու հանգամանքը», ըսաւ ան:

ԵՊՀ Հայոց պատմութեան ամպիոնի վարիչ Արտակ Մովսիսեան յայտնեց, որ իրենք երկու կողմերուն միջեւ պատուար կանգնած մարդիկ չ'են:

«Ի վերջոյ բոլորին նպատակը պէտք է ըլլայ լաւ կրթական, գիտական համակարգ ունենալ, երեխաներուն համար բնական միջավայր ստեղծել, ոչ թէ, վերջին հաշուով, այսօր ով նախարար է, ով վարիչ է, ով՝ սովորական

Դասախօսները ներկայացուցին իրենց առաջարկները: Երեւանի պետական համալսարանի հայոց լեզուի ամպիոնի վարիչ Իւրի Աւետիսեան ըսաւ, որ մինչեւ օրէնքի նախագիծին ընդունումը արդէն լրատուամիջոցներուն մէջ յստակ կերպով կը քարոզուէր այն գաղափարը, որ երկրաչափներուն, այսինքն բարձրագոյն ուսումնական համալսարաններուն մէջ ուսանող ապագայ երկրաչափին բնաւ պէտք չ'է ուսուցանել հայերէն, հայերէնի դասաւանդումը անտեղիօրէն կը ծանրաբեռնէ ուսանողները, իսկ դպրոցին մէջ ստացած գիտելիքը բաւարար է:



ԴԱՏԱՐԿ ՓԱՂԱՔՇԱՆՔ

« Զ Ա Յ Ո »

Դերենիկ Դեմիրճեան

«Մարդ ընդհանրապէս կրնայ դիմադրել թշնամութեան, բայց եթէ կ'ուզես փորձել մարդու նկարագիրը, իշխանութիւն տուր անոր...»

Աբրահամ Լինքոլն (1809-1865, ԱՄՆ-ի նախագահ)

Վերոյիշեալ կարգախօսը կը ցուցնէ Չորեքշաբթի, Նոյեմբեր 13-ին, Սպիտակ Տան նախագահական գրասենեակին հանդիպումը Միացեալ Նահանգներու նախագահ Տոնըլտ Թրամփի եւ իր թուրք պաշտօնակից Ռեճեպ Թայիպ Էրտողանի միջեւ:

Հանդիպում մը, որ իր մակարդակով եւ եղելութեամբ յար եւ նման է քանի մը շաբաթ առաջ Սպիտակ Տան վարձակալին կողմէ Թուրքիոյ իր պաշտօնակիցին յղուած նամակին: Փորթոքուլային դրոյթն է բոլորովին հեռու, նախակրթարանի մը մակարդակի, երկու ընկերներու միջեւ նամակագրութիւնը յիշեցնող այս քանի մը տողը, օրին ծիծաղել անելի յուսախաբութիւն պատճառեց քաղաքական միջավայրի մը, որ շատ անելի լրջութեան կը կարօտի: Այնպիսի ոճով գրուած էր այդ նամակը, որ կը յիշեցնէր գուտ առեւտրական առուծախի մակարդակի գրութիւն մը:



Շատեր Նոյնիսկ «սեւ կատակ» (black humour) մը կատարեցին, յայտնելով թէ նախագահ Թրամփ շփոթած է եւ թուրք կատարելու՝ դայլայլելու փոխարէն նամակ գրած է:

Նմանօրինակ կացութիւն մը կրկնուեցաւ Նոյեմբեր 13-ին, երբ փոխանակ նամակ մրտտելու, այս անգամ բեմահարթակէն կատարուեցան անհիմն եւ անհեթեթ գովասանքի խօսքեր եւ սուտ ու փուճ յայտարարութիւններ:

Էրտողանի քարոզչական մեքենային կողմէ պատրաստուած վաւերագրական մըն ալ ցուցադրուեցաւ ներկաներուն, փորձելով համոզել, թէ հիւսիսային Սուրիոյ մէջ կատարուած ներխուժումը իսկապէս «խաղաղութեան աղբիւր» մըն էր՝ իր անունակոչման նման: Բ. համաշխարհային ռազմական շարժումի քարոզչութիւնը կատարող Լենի Ռիֆընշթայլի գործերը յիշեցնող - թէեւ մակարդակով, շատ անելի մակերեսային եւ սկզբնապէս վաւերագրականը ո՛չ մէկ կարծիք կրնար փոխել, ո՛չ ալ համոզել երկմտանքի մէջ գտնուող քաղաքագետ մը:

Հոս միջանկեալ մէջբերում մը կատարելով, տեղին է հարցադրել, թէ արդեօք այս քարոզչական մեքենան այլ վաւերագրական մըն ալ պիտի պատրաստէ քանի մը օր առաջ Տաիւէի կողմէ սպանուած Գամիշլիի հայ կաթողիկէ համայնքի հովիւին մասին:

Գլուխ գործոցն ալ մամլոյ ասուլիսն էր, երբ Թրամփ ամենայն յանդգնութեամբ յայտնեց թէ նախընտրելի է բարձրախօսը փոխանցել եւ առիթ տալ Էրտողանի մօտիկ կամ հլու կամակատար լրագրողներու, որոնք թիւը հաւանաբար սակաւ է, նկատի ունենալով որ Յունիս 2016-ի դեպքերէն ի վեր հազարաւոր լրագրողներ բանտարկուած են:

Վերջապէս, հայութեան (անշուշտ երբեք Յայոց Յեղասպանութեան) անդրադառնալով, Սուլթանամետ կարծրատիպ Էրտողանը ըստ երեւոյթին տարբեր ձեւով հասկցած է Գրիգոր Զօհրապի, Երուխանի, Թլկատիցիի եւ անոնց յաջորդ սերունդի Չաւեն Պիպեմեանի եւ անելի քան տասը տարի առաջ անարգ ոճի գոհ գացած Հրանդ Տիկիի նկարագրած Պոլսոյ հայութեան իրապաշտ պանդխտութիւնը եւ պարզ ու մեկին, բազմիցս «թափառաշրջիկ» բառը գործածելով, անարգած եւ նսեմացուցած է հայորդին:

Թիւ 296 բանաձեւի մասին հպանցիկ էր կատարուած անդրադարձը: Ի վերջոյ այդ մէկն ալ արդիւնքն էր ռուս հանրահռչակ գրագետ Լեօ Թոլսթոյեան մէկ խօսքին. - «Քանի որ գեղծարար մարդիկ կը միանան եւ ուժ կը կազմեն, ուրեմն ուղղամիտ մարդիկ պետք է միեւնոյնը կատարեն»:

Խմբագրական «Հայրենիք»ի

Նուիրատուութիւն
«Գանձասար» շնորհակալութեամբ ստացած է հետեւեալ նուիրատուութիւնները.
-Քուէթահայ բարերար տիար Կիրակոս Գոյումճեանէն 100 ամ. տոլար:
-Նազելի եւ Հուրի Ազեգեաններէ, իրենց գաւկիսն եւ եղբօր մահուան քառասունքին առիթով, 5000 ւ.ո.:

Արդեօք մի բան հասկանում էք ինչո՞ւ: Որքան տարօրինակ, հանելուկային արարած, որքան խաբուսիկ: Երեւոյթը, ո՛չ ինքը: Բայց եւ ի՞նչ է ինքը, իր նկարագիրը: Չուտ աշխատանք: Որոնում եւ իր ինքնութիւնը, գտնում, բայց եւ իսկոյն տեսնում եւ, որ դա էլ նորից երեւոյթ էր: Անհանգիստ դէմք ունի, չի թողնում նկարես: Թուով գրեթէ ամենափոքրն է, տառապանքով՝ ամենամեծը: Ժամանակով ամենահինն է, վիճակով՝ ամենից անփոփոխը: Ամենից աննպաստն ի՞ր երկրի դիրքն է, ինքը ամենից յամառ կառչեց նրան:



Որքան անյոյս է թուում իր ապագան, բայց եւ որքան յուսացող է նա: Իր կենսքում նա երկու բան չտեսաւ. մէկ՝ բախտ, մէկ էլ՝ յուսահատութիւն: Ինչպէ՞ս ճանաչեաւ նրան, ինչպէ՞ս չափեաւ: Իր չափը չափազանցն է. զարմանալի՜ հաւասարակշռութիւն, որ ծայրայեղութեան մէջ է:

Ահա նայի՜ր այս բեռնակրին. ի՞նչ է սա, իսկական անառիկ, մեջքին մի սար բեռ՝ ճկում է, մեջքը կոտորում: Աշխատա՞նք է կատարում, թէ ինքնախորտակում: Վրէժ ունի, ի՞նչ է, իրենից հանելու: Ո՞ւմ դէմ է չարացել, որ իրեն է պատժում: Որքան ուժ, որքան աշխատասիրութիւն: Ի՞նչ է միտքը, մի փոքրիկ գումար հաւաքի, գնա, խանութ բաց անի: Մարդն իր հացի եւ իր գործի տերն է ուզում լինել եւ ո՛չ թէ սրանք ծանալ: Եւ արդէն Հայ նշանակում է տեր... Բայց տեսե՛ր էք նրան, երբ գաղթական է. ի՞նչ ծոյլ մուրացկան: Ամենաձեռնտու գործը տուր, չի ուզի: Ազգը տա՛ ինքը ուտի: Եւ սովից կը մեռնի անխօս, անխնայ, կ'ասես՝ ջգրու(գծանիշ-«Գ.»): Եւ սա այն գիւղացին է, որ երէկ կատարած, գազանացած՝ հողը քանդում էր, չարչարում, մզում, հոգին հանում: Այնպէս է հաւաքում բերքը, կարծես յաւիտեան պիտի ապրի, կարծես ոչ ոքի բաժին չպիտի թողնէ: Բայց գնա՜ իր խրճիթը, հազար գող, մարդ, շուն ու գէլ նրա հացի վրայ են: Ուտում են նրա հացը, ինչպէս Հայր Աբրահամի սեղանից:

Տեսե՛ր էք նրա բնակարանը, խլուրդի ծակում: Բայց անցիր նրա երկրով: Ինչ՞ հիասքանչ վանքեր, հոյակապ աշտարակներ, գողտրիկ

խաչքարեր: Հաւատալ կարելի՞ է, թէ ինքն է շինել այդ բոլորը: Խօսակցութիւնն եւ լսում՝ հայիոյանքների կէսը եկեղեցի ու Աստուած է: Լցրել է իր երկիրը եկեղեցիներով, բայց տարին մի անգամ չի մտնում մէջը՝ աղօթելու: Եւ հաւատալի՞ բան է, որ իր պատմութիւնը ամենամեծ կրօնական պատերազմների պատմութիւն է, եւ այս չաղօթող ցեղի Նարեկացու շուրթերից թռաւ աղօթքի ամենաբարձր թռիչքն առ Աստուած...:

Տանել չի կարողանում ծես, ձեւ, աստիճան, քաղաքավարութիւն: Ռամիկ է գերագանցապէս: Քաղաքականութեան մէջ մի բանում է շատ հոգածու՝ անկեղծ լինել: Այնքան անկեղծ է ու միամիտ, որ անկասկածելի խորամանկի եւ կեղծատրի տպաւորութիւն է թողնում:

Դանդալու է եւ խոնարհ՝ իր Սասունցի Դաւթի նման եւ անսպասելի ըմբոստ, հարուածող: Երբ վրայ է հասնում գերագոյն վտանգը, հերոսանում է յանկարծ եւ ծառանում վիշապի նման: Բարի է առհասարակ, շոյի՜ր, եւ կը կողոպտուի, բայց եւ առհասարակ ինքն է բարեկամ քեզ, իսկ քո բարեկամութիւնը վանում է: Տաղանդ է՝ իր դէմ ատելութիւն ստեղծելու: Ուրիշի յաջողութեան մէջ նախանձ ուտ է: Եթէ գըժտուեց մէկի հետ, դիակալ է, ինչպէս ուղտ: Ամէն հայ մի հայ ունի, որի հետ թշնամի է միսչեւ մահ: Սա նրա անհրաժեշտութիւնն է: Անկարգ է եւ անիշխանական թէ՛ հասարակութեան, թէ՛ պետութեան, թէ՛ գաղափարների մէջ: Իբրեւ ժողովրդական՝ անմիաբան է, անտանելի, խռովարար:

Ուր յեղափոխութիւն՝ այնտեղ Հայութիւն: Բայց իբրեւ «ական»՝ ծայրայեղական է: Իր կռիւը երեք ճակատի վրայ էր միաժամանակ: Ծահի դէմ, Սուլթանի դէմ, Յարի դէմ: Ասե՛ք՝ ամէն Հայ մի փոքր Ծիւրակեցի է Տօն Զիշոտի պէս: Կոտորածներից ամենագարհուրելին ինքը տեսաւ եւ ինքն էր, որ չխրատուեց: Ինչո՞ւ է այսպէս, ինչո՞ւ է դժգոհ, ի՞նչ է կամենում... Ինչո՞ւ է այսպէս անհաւասար, ներհակ, մահձոտ, անչափելի՜ իր վեժ թռիչքներում:

Երեւի, վրէժ ունի նա, մի վատ բան սրտի մէջ, որի համար եւ մեկուսանում է, որ նիւթ, դաւ, վնաս: Ո՛չ. Հայի ամենամեծ առաքինութիւնն եւ ուզում, ամենաներողամիտ ցեղը աշխարհիս մէջ: Ինչ՞ եղաւ իր պատմութիւնը. գարհուրելի ջարդեր, խոշտանգում, բնաջնջում... «Ջարդի՜ր ինձ,- ասում է նա, - ահա՛ քո պատիժը եւ իմ վրէժը»: Թուում է, թէ մի շատ մեծ վիրաւորանք կայ հայի սրտի խորքը, շատ խորը թաքնուած... թէ մի շատ մեծ վիրաւորանք կայ հայի սրտի խորքում թաքնուած, եւ դա այն արծուի վիրաւորանք է, որին ցած են բերել



### ԼԱԹԱՔԻՈՅ...

Սկզբը՝ էջ 1

ները: Յընթացս Ս. Պատարագին, սրբազան հայրը իր պատգամը ուղղեց ներկաներուն:

Յաւարտ Ս. եւ Ամմահ Պատարագին, տեղի ունեցաւ հոգեհանգստեան պաշտօն: Ապա եկեղեցւոյ ներքնասրահը տեղի ունեցաւ մտերմիկ հաւաք:

#### ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆ ՀԱՅՐԸ ԱՅՅԵԼԵՑ ԼԱԹԱՔԻՈՅ

Ուրբաթ, 15 Նոյեմբեր 2019-ին Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Սրբ. Եպս. Չօպուեան իր շքախումբով ժամանեց Լաթաքիա:

Սրբազան հայրը երեկոյեան այցելեց Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան կեդրոն, ուր բարի գալուստի խօսք արտասանեց միութեան ատենապետ թժ. Նիկոլ Մատանի: Ան ՀԲԸՄ մեծ ընտանիքին անունով ի սրտէ ողջունեց սրբազան հոր օրհնաբեր գալուստը, ապա միութեան գործունեութեան հետ առնչուած ամփոփ տեղեկութիւններ տուաւ եւ սրբազան հոր մաղթեց արեւշատ եւ արգասաբեր տարիներ:

Այնուհետեւ ներկայացուցաւ գեղարուեստական յայտագիր: Աւարտին, սրբազանը դրուատիքով անդրադարձաւ ելոյթ ունեցողներուն եւ յորդորեց լաւատեսութեամբ ապրիլ, որովհետեւ այս օրերուն լաւատեսութիւնը կենսական պահանջ է մասնաւորաբար սուրիահայութեան համար:



#### ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆ ՀԱՅՐԸ ԱՅՅԵԼԵՑ ԼԱԹԱՔԻՈՅ ՍՕԽ-Ի ԿԵՐՈՆ

Ուրբաթ, 15 Նոյեմբեր 2019-ին, երեկոյեան ժամը 7:00-ին, սրբազան հայրն ու իրեն ընկերացող պատուիրակութիւնը այցելեցին Լաթաքիոյ Սուրիահայ Օգնութեան Խաչի կեդրոն: ՀՄԸՄ-ի փողերախումբը տօնակա մթնոլորտ ստեղծեց իր խանդավառող ելոյթով:

«Կարպուշեան» սրահէն ներս ներկացուցաւ գեղարուեստական հակիրճ յայտագիր:

Ներկայ էին ՍՕԽ-ի, Համազգայինի եւ ՀՄԸՄ-ի անդամներ, համակիրներ եւ ժողովրդային հոծ բազմութիւն:

Համազգայինի «Կահան Նաւասարդեան» Մասնաճիւղի «Նարեկ» Երգչախումբը հայրենասիրական երգերով ազգային վառ ապրումներու արտայայտիչը հանդիսացաւ: Ամուսնեցող երիտասարդուհիները, իրենց տպաւորիչ առոգանութեամբ եւ հայատրոփ ոճով մեր մեծանուն բանաստեղծներուն ոգեղէն ներկայութեան խորհրդակիչը դարձան, իսկ Համազգայինի «Գեղարդ» պարախումբը հայկական պարարուեստին հմայքով պարուրեց ներկաներուն հոգին:

Աւարտին, սրբազան հայրը իր սրտի խօսքը արտասանեց ու ըսաւ. «Մենք մեր դարաւոր պատմութեան

ընթացքին վշտակիր եղանք, սակայն աննուաճ կամքով յաղթական դուրս եկանք մեզ շրջապատող մարտահրաւերներէն: Յաճախ տազնապի մատուցեցանք: Ամմեղ գոհեր տուինք: Վասն հաւատոյ եւ վասն հայրենեաց սրբադրոշմ նշանաբանով գինուած՝ խաւարասերներուն դէմ պայքար մղեցինք: Արեան վկայութեամբ ցոյց տուինք, թէ հայր ազատատենչ է, քրիստոսասէր եւ հայրենասէր է»:

Ապա սրբազան հայրը Լաթաքիոյ ՍՕԽ «Շուշի» Մասնաճիւղի գրասենեակները շրջագայեցաւ եւ օրհնաբեր խօսքերով խրախուսեց անդամները: Ժողովարահէն ներս խորհրդակցական նիստ տեղի ունեցաւ:

ՍՕԽ-ի Շրջանային Վարչութեան Լաթաքիոյ ներկայացուցիչ Հուրի Տեիրմենճեան ափով ձեռով խօսեցաւ վարչական դրուածքին եւ տարուած աշխատանքին մասին:

Համազգայինի Սուրիոյ Շրջանային Վարչութեան Լաթաքիոյ ներկայացուցիչ Նայիրի Կարապետ-

եան իր կարգին, տեղական մասնաճիւղի վարչութեան աշխատանքին մասին ամփոփ գեկոյց մը տուաւ:

ՀՄԸՄ-ի Լաթաքիա Մասնաճիւղի Վարչութեան ատենապետ եղբայր Յարութ Գաբրիելեան շնորհաւորական խօսքեր ուղղեց սրբազան հոր, որմէ ետք միութեան աշխատանքներուն անդրադարձաւ:

Սրբազան հայրը շահեկան համարեց սրտբաց տեսակցութիւնը եւ բարեյայտող երթ մաղթեց ներկաներուն:

Աւարտին, սրբազանը անգամ մը եւս շեշտեց աննկուն կամքով, հաստատուն հաւատքով, ապագայատեսիլ սեւեռումներով եւ մարդուժ պատրաստելու հեռանկարով գործելուն անհրաժեշտութիւնը:

#### ՍՐԲԱՉԱՆ ՀԱՅՐԸ ԱՅՅԵԼԵՑ ԿԻՐԱԿԵՐՈՆԵԱՅ ՎԱՐՄԱՐԱՆ

Շաբաթ, 17 Նոյեմբեր 2019-ի առաւօտեան ժամը 10:30-ին, Առաջնորդ Սրբազան Հայրը այցելեց Լաթաքիոյ Ս. Աստուածածին եկեղեցւոյ Կիրակեօրեայ վարժարան, իսկ երեկոյեան ժամը 4:30-ին, Լաթաքիոյ Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, հանդիսապետութեամբ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Սրբ. Եպս. Չօպուեանի, մասնակցութեամբ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արթ. Տ. Վազգէն Զինյ. Զեօշկերեանի, Խորէն Զինյ. Պերթիգլեանի, ներկայութեամբ ուխտաւոր հաւատացեալներու, տեղի ունեցաւ Կիրակեօրեայ ժամերգութիւնը եւ աղօթիների արարողութիւնը:

Շաբաթ, 17 Նոյեմբեր 2019-ին, երեկոյեան ժամը 7:00-ին, Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Սրբ. Եպս. Չօպուեան իր շքախումբով այցելեց Լաթաքիոյ Յոյն Ուղղափառ Համայնքի Առաջնորդ Աթանասիոս Ֆահտ Եպիսկոպոսին:



Հոգեւոր առաջնորդները շեշտեցին գործակցութեան կարեւորութիւնը՝ սերտ կապերը ամրապնդելու ակնկալութեամբ:

#### ԼԱԹԱՔԻՈՅ Ս. ԱՍՏՈՒԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՅ ԱՆՈՒԱՆՎԱԳՈՂՈՒԹԵԱՆ ՏՕՆԸ

Կիրակի, 18 Նոյեմբեր 2019-ին, առաւօտեան ժամը 10:00ին, Լաթաքիոյ Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, Ս. Կոյս Մարիամ Աստուածածնի Տաճար Ընծայման տօնին առիթով, հանդիսաւոր Ս. եւ Ամմահ Պատարագ մատուցեց: Պատարագիչն էր Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Սրբ. Եպս. Չօպուեան: Խորանին սպասարկեցին Արթ. Տ. Վազգէն Զինյ. Զեօշկերեան եւ Խորէն Զինյ. Պերթիգլեան: Ներկայ էին Թեմիս Ազգային վարչութեան ատենապետն ու ատենադպիրը, եկեղեցւոյ Թաղական խորհուրդի անդամները, միութեանց ներկայացուցիչներ, ծովափնեայ շրջաններէն ժամանած հայորդիներ եւ ուխտաւորներու խումբերամ բազմութիւն: Դպրաց դասի երգեցողութիւնը յատկանշական էր իր նրբերանգ ելեւէջներով եւ մեղեդիաբարբառ առոգանութեամբ: Յընթացս պատարագին, Աստուածամոր պատկերին օծման արարողակարգը կատարուեցաւ: Գործին հեղինակն է արուեստագետ Սիրան Աւրեսեան-Ամպարճեանը: Սաղմոսասացութենէն, յատուկ աղօթք կարդացուելէն եւ շարականի երգեցողութենէն ետք, Սրբազան հայրը սրբալոյս միւռնոսով օծեց սրբապատկերը, որ արուեստի իւրայատուկ ոճով պատրաստուած էր: Տիրոջ տան վայելչութեան ծառայող Աստուածամոր պատկերը, բարեպաշտական ապրումներու խորացման պիտի նպաստէր: Սրբազան հայրը իր քարոզին մէջ սրտի անհուն բերկրանքով եւ գոհաբանական խօսքերով գաստուած մեծարեց, իր մարդասիրական խնամքին եւ անպատմելի փառքին համար: Երկնատեք բարիքներ, որոնք կը բացայայտեն Տիրոջ ներկայութիւնը մարդկային կեանքէն ներս: Ապա

Աստուածամոր ընծայման սրբաւոր յիշատակին մասին անդրադարձաւ, յայտնելով թէ Ս. Կոյս Մարիամին օրհնակին հետեւելու է իւրաքանչիւր քրիստոնեայ:

Աւարտին, «Արարատ» սրահէն ներս տեղի ունեցաւ աջահամբոյր:

Նոյն օրը, կէսօրին, Ս. Աստուածածին եկեղեցւոյ մեծ ընտանիքը «Գանձասար» սրահէն ներս ճաշկերոյթ կազմակերպեց, ի պատիւ Առաջնորդ Սրբազան հոր: Նորանշանակ թաղական կազմի ատենապետ՝ տիար Վահէ Կարճիկեան, ներկաներուն անունով բարի գալուստի խօսք արտասանեց Սրբազան հոր, որմէ

ետք ասմունքողներ եւ մենեղաողներ իրենց ձիրքերով առաւել եւս հաւաքը մտերմիկ դարձուցին:

Կիրակի, 18 Նոյեմբեր 2019-ին, Լաթաքիոյ Ս. Աստուածածին եկեղեցւոյ Թաղական Խորհուրդի գրասենեակէն ներս, Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Սրբ. Եպս. Չօպուեան խորհրդակցական հանդիպում ունեցաւ Լաթաքիոյ, Թարթուսի, Զեսապի, Ղընէմիէի եւ Արամիոյի եկեղեցիներու թաղականութեանց հետ: Տեսակցութեան ընթացքին Սրբազան հայրը ներկայ մարտահրաւերները շրջահայեաց կերպով դիմագրաւելը կարեւորեց: Ծովափնեայ շրջաններու թաղականութեանց ներկայացուցիչները, ամփոփ ձեռով խօսեցան ներկայ իրավիճակին մասին, յայտնելով թէ հակառակ բազմաբնոյթ տազնապնդումն՝ ծովեզերեայ շրջանի հայերը յուսադրուած կը շարունակեն ապրիլ: Անոնք նաեւ իրենց մտահոգութիւնները պարզեցին սրբազան հոր:

Երկուշաբթի, 18 Նոյեմբեր 2019-ի առաւօտեան ժամը 9:30-ին, Լաթաքիոյ Ազգ. Սրբ. Նահատակաց դպրոցի մեծ ընտանիքը, խանդավառ ծափողոյցներով դիմաւորեց Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Սրբ. Եպս. Չօպուեանը:



Աշակերտները ներկայացուցին գեղարուեստական յայտագիր: Սրբազան Հայրը գնահատեց աշակերտները խրախուսելով գանձը եւ թելադրելով սիրելի հայ եկեղեցին եւ դպրոցը, դառնալու համար պատուաբեր հայորդիներ:

Թող Աստուածամոր բարեխօսութեամբ Աստուած խաղաղութիւն պարգեւէ Սուրիական Հայրենիքին:



## Թուրքիոյ նուրջ

### ՇԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄ ԹՐԵՎԱԿԱՆ ՄԱՍՈՒՆ ԵՒ ՇԱՅՈՑ ԺԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ԺՄՏՈՂ ԼՐԱԳՐՈՂ ԶՐԱԺԱՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԱԾ Է

«Էրմենիհապեր» կը յայտնէ, որ Թուրքիոյ մէջ սովորաբար հետապնդման կ'ենթարկուին, կամ աշխատանքէ դուրս կը դուրս շարք մը նիւթերու վերաբերեալ պետութեան դիրքորոշման հակադիր կարծիք յայտնած լրագրողներն ու գործիչները:

Այս անգամ, սակայն, հակառակը պատահած է: Թուրք լրագրողը հրաժարական ներկայացուցած է լրատուական-վերլուծական կայքի խմբագրութեան, իսկ պատճառը Յայոց Յեղասպանութիւնը պետական թեզերով ժխտող իր յօդուածին հեռացումն է կայքէն:



Դեպքը պատահած է Յայոց Յեղասպանութեան մասին բազմաթիւ հրապարակումներով յատկանշուող, ազատական եւ ընդդիմադիր հայեացքներով յայտնի «Gazete Duvar» լրատուական կայքի խմբագրութեան հետ:

Կայքի գլխավոր խմբագիր Ալի Թուրան Թոփուզ հեռացուցած է Զիւլքիւն Թուրքօղլուի «Յայերուն Տեղահանութիւնը» վերնագիրով յօդուածը՝ անոր փոխարէն տեղադրելով իր գրած «Ներողութեան Գրութիւն. Ժխտողականութեան Մերժում» յօդուածը:

«Շատ կը ցաւիմ: Շատ դժուար է ամօթս արտայայտելը», կը գրէ գլխավոր խմբագիրը՝ բացատրելով, որ իրենց կայքը չ'ընդունիր ժխտողականութիւնը, իսկ Թուրքօղլուի յօդուածը հրապարակուած է առանց կարդացուելու, քանի որ այս օրերուն խմբագիրներու նուազումին պատճառով երբեմն մշտական թղթակիցներուն յօդուածները առանց ստուգման կը հրապարակուին:

«Gazete Duvar»ը ժխտողականութիւնը մերժող մտածելակերպով կ'առաջնորդուի: Այդ մէկը կը վերաբերի նաեւ Յայոց Յեղասպանութեան հարցին: Ես կը հաւատամ, որ մտքի ազատութիւնը մեզ չի պարտադրեր ընդունիլ ժխտումը, աչք փակել անոր վրայ ու օգնել անոր տարածման», գրած է Թոփուզ:

Իր յօդուածին հեռացումէն ու գլխավոր խմբագիրին ներողութեան գրութեան հրապարակումէն ետք, Յայոց Յեղասպանութիւնը ժխտող լրագրող Թուրքօղլուն հրաժարական ներկայացուցած է:

## ԱՇԽԱՏԱՆՔԸ ՄԻԱՅՆ ՉԱՐՉԱՐԱՆՔ Է



Sargis Sargsyan

Պատմութեան ընթացքին մարդարարածին ինքնութիւնը որոշողը եղաւ աշխատանքը: Աշխատանքին սկզբնական հիմը եղաւ պատիժը, երբ մարդը անհնազանդ գտնուեցաւ: Աշխատանքը այն դուռն է, որ բոլորին առջեւ բաց է, որովհետեւ այդ դռնէն ներս մտնող մարդը իր կեանքը կրնայ ապահովել, սակայն միեւնոյն ժամանակ ան կշիռը մըն է, որ իւրաքանչիւր անձի տարբեր արժէք մը կու տայ: Դետեւաբար մեր մտքին մէջ կը ծագի այն հարցումը, թէ արդեօ՞ք միայն աշխատանքով է որ մարդ ցոյց կու տայ իր արժէքը, եւ արդեօ՞ք մարդ արարածը աշխատանքը որպէս պատիժ յառաջ կը տանի:

Դարեր առաջ աշխատանքը կը վերաբերէր միմիայն ստրուկներուն, որոնք մարդ արարածի արժէք չունէին, որովհետեւ անոնք առարկայի համագործակցութիւնէն համազօր էին. եւ այդ իսկ պատճառով Պղատոն կը դատապարտէր աշխատանքը, որովհետեւ ըստ իրեն. «Աշխատանքը մարդ արարածը կը հեռացնէ խոկումէն», այլ խօսքով աշխատանքը կը փոխէ մարդուն միտքը, որովհետեւ այն մարդը, որ կ'աշխատի չի մտածէր, միմիայն կը հետաքրքրուի նիւթով եւ հեռու կը մնայ միտքերու աշխարհէն եւ խոկումէն: Աւելին՝ նկատի ունենալով, որ աշխատողը միայն նիւթով հետաքրքրուած է, ան չի կրնար փոխադրուիլ:

Արիստոտել նոյնպէս կը դատապարտէ աշխատանքը: Ան կ'ըսէ. «Աշխատանքը շղթայ մըն է, որ ունի չորս օղակ. - նիւթը՝ անշարժ գործիք (անկենդան), շարժումը, կենդանի գործիքն ու տէրը. (կենդանի գործիքը ստրուկն է)»: Ստրուկը կենդանի գործիք կը կոչուի, որովհետեւ կը շարժի, իսկ այլ իրեր չեն շարժիր: Աշխատանքը մարդը կը վերածէ գործիքի: Ըստ Արիստոտելի. «Ըստրուկը կը բանի այնպէս ինչպէս գործիքը կը բանի»:

Այս աշխատանքին ձեւը, որ կը ստրկացնէ մարդը եւ գայն կը վերածէ գործիքի, դարձուցնելու ընթացքին գոյութիւն ունեցած է: Այլ խօսքով՝ այս աշխատանքին կերպը ժխտական ազդեցութիւն ունի մարդուն վրայ: Աշխատանքը առաքելութիւն ըլլալու փոխարէն կը վերածուի չարչարանի: Այս պարագային, աշխատանքը ինքնին չարչարան է:

Յունական դիցաբանութեան մէջ գոյութիւն ունի Sisyphes-ը: Sisyphes-ը այն անձն է, որ դատապարտուած է տաժանագին պատիժի. անոր պատիժն է մեծ ժայռ մը գարիվեր բարձրացնել: Այս մէկը անկարելի է, որովհետեւ ինչքան ալ մարդը չարչարուի եւ այդ ժայռը գազաթ հասցնէ, ժայռը դարձեալ վար պիտի գլորուի եւ մարդը կրկին պիտի չարչարուի այդ ժայռը վեր հասցնելու համար:

Պատիժի եւ չարչարանի առաջին գաղափարը կը գտնուի Աստուածաշունչին մէջ, երբ Աստուած Ադամին կ'ըսէ. «Ճակտի քրտինքովդ ուտես քու հացը», այսինքն ան պետք է որ չարչարուի, որպէսզի յարգահարտ սովութիւնն ու մահը: Մինչեւ այսօր մօր մը ծնունդ տալու օրը կը կոչուի Labor day, որ կը նշանակէ աշխատանքի օր եւ ըսել կ'ուզուի, թէ աշխատանքը համագործ է չարչարանի: Այս բոլոր չարչարաններուն եւ տանջանքներուն կողքին, աշխատանքը մարդուն կեանքէն ներս յեղաշրջում կը կատարէ: Գերմանացի փիլիսոփայ Մարքս կը խօսի Alienation-ի մասին, որ կը նշանակէ, թէ մարդ այլեւս ինքզինքը կը սկսի չճանչնալ: Մարդ արարածը մեքենան ստեղծեց, որպէսզի իր կեանքը աւելի դիւրանայ, սակայն հակառակը եղաւ՝ մարդը դարձաւ մեքենային գերին եւ մեքենան սկսաւ կառավարել մարդը, ինչպէս օրինակ՝ ազդարարները. մարդը ստեղծեց գանոնք, սակայն ան է որ կը կառավարէ, ոչ թէ միայն մէկ հոգի, այլ ամբողջ քաղաք մը: Այսպիսով ի յայտ եկաւ Machinisme-ի գաղափարը: Մեքենաները եկան մարդը մեքենայացուցին անոր հանգըստութիւն պարզելու փոխարէն, եւ որոշ ժամանակ մը ետք ան ինքզինքը կորսնցուց եւ ինքնիրեն օտարացած զգաց:

Ճիշդ է որ Աստուած պատժեց Ադամը, սակայն այդ պատիժը կամաց-կամաց վերածուեցաւ դրական դաստիարակութեան: Աստուած մարդուն տուաւ դաստիարակական պատիժ, ոչ թէ պարզապէս պատիժ մը: Այդ պատիժը վերածուեցաւ արժէքի: Աստուած մարդը պատժեց, որպէսզի անոր շնորհէ երկրորդ առիթ մը ինքզինք սրբագրելու համար:

Աշխատանքը սեփականութիւն ձեռք բերելու միջոց է նաեւ: Եւ այդ սեփականութիւնը միայն նիւթակալէ: Իւրաքանչիւր անձ իր աշխատանքին արդիւնքը կը վաստակի, ինչպէս որ Աստուածաշունչին մէջ ըսուած է «Ինչ որ ցանես, այն կը հընձես»: Աշխատանքը մեզի սեփականութեան իրաւունք կու տայ:

Աշխատանքը ինքնին դատապարտելի չէ, այլ աշխատանքին ոչ-մարդկային պայմանները դատապարտելի են: Աշխատանքը արժէք մըն է եւ այդ իսկ պատճառով Մարքս կը դատապարտէ աշխատանքին ոչ-մարդկային պայմանները:

Աշխատանքը ինքնին արժէք է: Աշխատանքը դրական բան է, մինչ պայմանները երբեմն՝ ժխտական: Այս բոլորին կողքին աշխատանքը նաեւ յառաջդիմութեան եւ գարգացման աղբիւր է: Աշխատանքով է, որ մարդ կը գարգանայ ուսումի կամ այլ ասպարեզներու մէջ: Միայն

Համագայիկի Սուրիոյ Շրջ. Վարչութեան  
Լեւոն Շանթ Թարգերական Միաւորը կը ներկայացնէ

Տոկոսաւորութեան  
ԲԵՐԻՈՅ ՆԱՅՈՅ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ  
ԳԵՐՇ. Տ. ՄԱՍԻՍ Ս. ԵՊՍ. ԶՕԳՈՒԲԵՐՆԻ

# ԵՍԻՄԱՐԴԸ

Զեղուսի Լեւոն Շանթ

Բեռնատնային  
ՅՈՒՆԻԿ ՂԱԶԱՐԵԱՆ

Մեր գոթաստիւթիւնը  
ԱՅՆ ԶԷ, ՈՐ  
ԱՇԽԱՐՀՈՒՄ ԿԱՆ  
ԹՈՒՐԷՐ,  
ԱՅՆ ԱՅՆ, ՈՐ  
ԿԱՆ ԹՈՒՐԵԱՆՄԱՆ  
ՀԱՅԵՐ

ԳՍԻՔԻՆ ՆՊԵՇ

Կիրակի 17 եւ 24 Նոյեմբեր 2019-ի երեկոյեան 7:00-ին, «Գեորգ Եսայես» սրահէն ներս:



## ՄՆԿԻՐԿՆԵԼԻ ՀԱԼԷՊՐ. ԹՈՒԽՈՎ ԲԱԺՆՈՒԵՑԱՅ ՀԱԼԷՊԷՆ



Մաթիկ Եպիֆանյան

Եթե տարուան բացակայությունն էսքայցեցի ծննդավայրս՝ Յալայ:

Հայրենիք այցելութիւնը որպէս զբօսաշրջիկ՝ չէր բաւեր, սփիւռքահայու մեր դառն ճակատագրին վրայ կայ այլ երեւոյթ մը՝ ծննդավայրի այցելութիւնը:

Սուրիոյ պատերազմի ճիրաններուն մէջ մեկուկէս տարի ապրելէ ետք, արձակուրդով մեկնեցանք Պէյրութ, այդ օրերուն չէի կրնար երեւակայել, թէ միայն եօթը տարի յետոյ ժընեւեն ... արձակուրդով պիտի վերադառնայի Յալայ:

Եկայ, տեսայ, ուրախացայ... Ոմանք կրնան գարմանքով հարց տալ, թէ ուրախալի ի՞նչ երեւոյթ գտար:

Պատասխանը՝ հոն ապրող արիւնակիցներուս աչքերուն մէջ գտայ. անոնց գոյատեւելու տրամադրութեան, մշակութային արժէքներու պահպանման, հայեցի դաստիարակութեան ջանքերու կամքին, ժուժկալ ապրելակերպին եւ զրկանքները դիմագրաւելու հոգեբանութեան մէջ գտայ...

Անդրանիկ Ծառուկեանի «Երազային Յալայ» երկրորդ հատորի կողքին հետեւեալ հաստատումը տպուած է. «*Յալայահայութիւնը, ֆիզիքական առումով, որքան ալ նուազի, որքան ալ պակասի թիւերը, արմատը կը մնայ: Ես համարած եմ, խորունկ գիտակցութեամբ, որ հալայահայութիւնը ամբողջ Սփիւռքի ծաղիկն է: Եթէ սփիւռքահայութիւնը նմանցնենք համեմատելի, անուշ պտուղի մը, այդ պտուղին կորիզը, այդ պտուղին սնունդ տուող առաջին հունտը Յալայ քաղաքը եղած է եւ կը մնայ: Կրնամ ըսել, որ այսօր Սփիւռքի գանազան կերտողներուն մէջ դիրք ունեցող, ազգային, գրական, կուսակցական դեր կատարող մարդը ինչուստեւեմ հարիւրը եղած են Յալայէն»:*

Այս խօսքերը հեղինակը արտասանած է 1983-ին, Յալայի մէջ: Այդ ժամանակաշրջանին ցեղասպանութեան պատճառով «Սեպիլի վրաններ»ու տակէն եւ գաղթականներու թիթեղածածկ խրճիթներէն դուրս եկած սուրիահայը կը ներկայանար երկրի բարգաւաճ կենցաղ ապրող բնակիչներուն առաջին գիծին վրայ, ապա յաջորդող երեսուն տարիները սուրիահայ գաղութի պատմութեան ոսկեղարը հանդիսացան, ազգային եւ միութենական բոլոր կառույցները մեղուափեթակի երեւոյթ կը պարզէին մինչեւ աննախատեսելի աղետի օրերը:

Յալայահայու մասին Ծառուկեանի այս հաստատումը անգամ մը եւս փաստուեցաւ սուրիական ահաւոր պատերազմին ատեն, բոլոր այն գաղութներուն մէջ, ուր գաղթեց ու կայք հաստատեց ան, Աւստրալիայէն մինչեւ Զանաբա: Դէպի հայրենիք ներգաղթն ալ ուրիշ էր, հալայահայը այնտեղ տարաւ իր արհեստն ու խոհանոցը՝ Արեւելքի բոյրով համեմուած:

Հալայ վերադարձայ ինձմէ առաջ այցելողներու մասամբ վատ տպաւորութեան ազդեցութեան տակ: Սակայն պատահեցաւ հակառակը, լիբանանեան սահմանը հատելէ ետք, սուրիացի առաջին պաշտօնեան անցագիրս ստուգելով՝ «*Եթե տարուան բացակայութենէ ետք բարի եկած ես*» խօսքով յուզեց զիս, կոկորդս սեղմուած էր, սակայն տրամադրութիւնս՝ բարձրացած, մինչ կը լսուէր արեւածագէն առաջ քալողականչերուն ուղեկցող մզկիթին առաւօտեան աղօթքի հրաւերի կոչը:

Խանասերի մահուան ճանապարհը իսկապէս հաճելի չէր, հանգիստի պահուն վարորդները կը խօսէին նախորդ օրուան արկածին մասին, կրկին գոհ մը ակնցած էր հարկաւորներու շարքին, ելեւէջերով ընթացող ճամբուն վրայ. ինձի համար, յիսուն տարուան յետադարձ յիշողութեամբ ճամբորդութիւն մըն էր Յալայէն Իտլիայ ուղին, որ կը շարունակուէր դէպի Դամասկոս կամ Լաթաքիա, նեղ երկար, մեկ ուղիութեամբ, սակայն բաղադրուած չէր անցեալին հետ, հիմա ակնի վտանգաւոր ու խճողուած դարձած էր, արագ ընթաց սուրացող ինքնաշարժներու մէջ նստած, օրերով քուն չտեսած այքերդ անգամ չէն փակուիր:

Հալայ հասնելու մեզի ծանօթ դասական ազգանշանը մայրուղին էր, մինչեւ Ամերիկեան քուլտի դիմաց, երկրագունդի բոլորակը, ուր կը հասնէինք երկրի հարաւ-արեւմուտքէն:

Այս անգամ մենք արեւելքէն կու գայինք, անապատային տարածքէն ակերակ գիւղերու ընդմէջէն հասնելով ճապարակի աղի լիճը, Սֆիրէի եւ ճըպրինի գաւառը, յետոյ մուտք գործեցինք օդակայանի մայրուղիին ակարտը՝ դէպի Արդուայ Յամիտիէ եւ Սուլեյմանիէ թաղամասերը:

Կարօտցած էի Յալայի ժխորը, ինքնաշարժներու անընդհատ ճչակները, տարիներու կարօտը, յառաջադէմ երկրէ մը գալու իրավիճակ մոռցած էի, տասնեակ տարիներով օրական անցած ճամբաներս բազմահազար յիշատակներ պեղեցին, այս տրամադրութեամբ հասայ հօրենական տունս, ուր մայրս արդէն գալուստիս ուրախութիւնը կ'ապրէր օրերէ ի վեր:

Հայաստանը՝ որպէս հայ ժողովուրդի վախճանական նպատակ, որեւէ ժամանակ այսքան ծանօթ չէր տեղացիներուն համար, զիս տեսողներուն առաջին հարցումը կ'ըլլայ՝ «*Հայաստան կը գտնուէի՞ր*»:

Կար ժամանակ, երբ մեզի կրօնակից տեղացիներէն ոմանք «*Հայու բեկորներ*» արհամարհական մակդիրը կու տային, հիմա իրենք կը ցանկանային «*բեկորներ*»էն ըլլալ Հայաստանի քաղաքացիութիւն ստանալու համար:

Շուրջ երեսուն տարիներու երկարութեամբ հիմնած բոյնս, փառք Տիրոջ եւ Վիլլաներու շրջանը պահպանող մեր տղոց, որեւէ վնասի չէր ենթարկուած, եթէ տարի առաջ

դուռը փակելու պահուն դուրս եկայ սովորական արձակուրդի մեկնողի մը հոգեբանութեամբ, օդակայան փոխադրող ինքնաշարժին մէջ պայուսակներս գետեղելու պահուն աչքերս հանդիպեցան վաղեմի ընկերոջ մը աչքերուն, որ կը վարէր Չաւարեան վարժարանի շտապօգնութեան վերածուած ինքնաշարժը: Նայուածքը խիստ էր, զգացի, որ տկար եմ՝ ի տես հարիւրաւոր անձնագոհ հայորդիներուն, որոնք հաւատարմօրէն պահեցին եւ ոմանք նահատակուեցան հայկական թաղերու պաշտպանութեան եւ ժողովուրդին կարիքները հոգալու ճամբուն վրայ: Բիւրյարգանք անոնց յիշատակին եւ անփոխարինելի վաստակին:

Համրուած օրերը շուտ անցան, «*Կիլիկիա*» գրատան-հրատարակչատան վերաբացման հարցումներուն մասին պատասխանս չունէի, այսպիսի մտածում մը, ընտանեկան պարտաւորութիւններուս ի տես, զիս կը ղնէ քցանի մը մէջ: Ասպարէզիս հետ կապուած պետական եւ հարկային պարտաւորութիւնները խլեցին ժամեր ու ժամեր: Մթերանոցի եւ վաճառատան փակ վիճակէն գոյացած խոնարութիւնը որոշ վնասներ պատճառած էին, սակայն բաղդատելով ոմանց աղէտեալ, կողոպտուած եւ քանդուած, ինչպէս տեղացիները կ'ըսեն՝ «*Հացի դուռ*»երուն հետ, ընդունելի եւ գոհացուցիչ էր վիճակս: Գրասեր հասարակութեան մօտ զգալի էր բացակայութեանս պատճառով անոնց ունեցած ծարաւը:

Հինգ տարիներ գեհեմի սահմաններէն ներս ապրող քաղաքի իւրաքանչիւր թաղամասը ունի հորերու վրայ կառուցուած ժողովուրդին ջուր տուող աղբիւրներ, որոնց ցամքած երեւոյթը եւ քակուած ծորակները կը հաստատեն, որ մոճաւանջային օրերը անհետացած են: Տակաւին օրերու ընթացքին սակաւաթիւ ժամեր կը գործեն հսկայ ելեկտրաշարժակները, որոնք «ամփեր» կը մատակարարեն հոսանքի ընդհատումի ժամերուն:

Հալայի բազմատեսակ արտադրութիւնները իրենց որակով եւ մատչելի սակերով շլացուցած են բոլոր այցելուները, յատկապէս՝ դրացի երկիրներէն, հիմա տեղական դրամանիշի անկումով, ընդհանրապէս բոլոր սակերը տասնապատկուած են: Սակայն նոյն համեմատութեամբ չէ բազմապատկուած քաղաքացիին եկամուտը:

Մետաքսի ճամբուն վրայ դարերու ընթացքին իրենց այլազանութեամբ, առատութեամբ եւ մատչելի սակերով աշխարհահռչակ Հալայի հնադարեան շուկաները ակերի եւ քանդումի պատճառով տեղաշարժի ենթարկուած են: Բազմադարեայ փակ շուկայի խանութպանները տարածուած են քաղաքին մէջ: Սերունդէ սերունդ փոխանցուած այդ վաճառատուներուն ասպարէզները ոմանց մօտ մականուն է արդէն, որ պահած են հարիւրաւոր տարիներ: Ժամանակակից սերունդը կը հաւատայ, որ իր ապրած սեւ օրերը անցողիկ են, իրենք շուտով պիտի վերադառնան իրենց բնօրանները, վերածաղկեցնեն արհեստներն ու ասպարէզները եւ փոխանցեն գալիք սերունդներուն:

Դժբախտաբար աշխարհաս-

փիւռ հայորդիներս այս տրամաբանութեամբ շրջապատը չենք դիտեր, այլ՝ Ամենակալին մեզի շնորհած կեանքի տարիներու պրիսմակէն միայն: Իր ուղեքուն տակ հայրենի հողը ունեցող քաղաքացիին հոգեբանութիւնը տարբեր է մեր պանդուխտի մտայնութենէն, անոր կեանքը փոքր մասնիկ մըն է իր հայրենիքի պատմութենէն, աղետները եւ ծախորդ օրերը կը յաղթահարուին այս հոգեբանութեամբ, ազգերն ու ժողովուրդները իրենց յաղթանակներն ու նուաճումները կը կերտեն այս ըմբռնումներով:

Սուրիան արաբական աշխարհի մէջ կիներու իրաւունքները հաստատող առաջին երկիրը հանդիսացած է, ուսման, քուէարկութեան, ինքնաշարժ վարելու, պետական պաշտօններու եւ այլազան բնագաւառներու մէջ խտրութեան պատրվադուց քանդուած էր: Կիներու աշխատանքը սովորական երեւոյթ մըն էր որոշ մարզերու մէջ նախապատերազմական շրջանին, կրթական մարզի մշակները գրեթէ մեծամասնութեամբ կիներ էին: Պատերազմի պատճառով երիտասարդ այրերու բացակայութիւնը զգալի է ամէն տեղ, ի պատիւ կանանց, մանաւանդ՝ մանկամարդուհիներու, հպարտօրէն ականատես եղալ կիներու մուտքը գանազան ասպարէզներու մէջ, պետական հաստատութիւններու մէջ՝ որպէս գործակատարներ, համակարգիչներու շուկային մէջ՝ որպէս ծրագիրներու մասնագէտներ, խոհանոցային սպասարկութիւններու եւ ճաշարաններու մէջ գանազան դիրքերու վրայ, ամէնտեղի ու շուկայի մէջ նոյնիսկ մսավաճառ կին տեսայ:

Որպէս ուխտաւոր՝ այցելեցի ամիսներ առաջ Նորոզուած, կերպարանափոխուած եւ վերասօժուած հոգւոյս ծննդավայր՝ Յալայի Ս. Զառանգի Մանկանց Մայր եկեղեցի: Ապա յուզումնախառն հոգեվիճակով մեղմադոտ քալեցի... հոգւոյս խորքը կայք հաստատած թաղերէն, ուր մանկութեանս յաճախ կ'այցելէի ազգականներու եւ հոն ապրող ընկերներու տունները, դուրս եկայ Սալիպէի մուտքի դռնէն անցնելով նախակրթարանիս՝ Ազգային Հայկազեան վարժարանի տղոց բաժնի փողոցէն, ապա՝ ճիւղտեղի շուկայէն դէպի «Սահայ» ալ Յալայի, դիմացը քառակուսի տափարակ դաշտ մը կար, ուր կը կանգնէր երբեմնի ճաշարան «Տար Չամարիան», ետեւալ երկրորդ մասնաշէնքի ակերակները կ'երեւէին, մտայ Արծիւեաններուն բակը. հոն ակերակներուն մէջ կանգուն էր քեպպեթի ծառը եւ կեղոնի աւագ անը: Տեղ-տեղ սկսած էր վերաշինութեան աշխատանքը, յատկապէս՝ մզկիթները եւ կարգ մը խանութներ, Հալայի երբեմնի Ռուսմասիթաց վարժարանի վայրը՝ Սահեթ Թանանի-րէն հասայ Պապ Էլ Նարիի ներսի թաղերու ակերակները, հոս կանգ առի, երբ հեռուէն նկատեցի ամբողջովին նորոգուած Զառանգ քաղաքի մուտքը, որուն առջեւ Ուրբաթ առաւօտուն հաւաքուած երիտասարդները կը սպասէին նախորդ օրը ամուսնացած իրենց ընկերը, բաղկիք բերելու աւանդական սովորութեան... Յուզումը խեղդեց կոկորդս,



## ՄԱՅԸԸ ԲԱԲԱՅԵԱՆԻ «ՅՈՒՇԱՄԱՏԵԱՆ ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ» ԳՈՐԾԸ ՀՊԱՐՏՈՒԹԻՒՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂ ԻՐԱԳՈՐԾՈՒՄ Է

### Նազարեթ Պերպերեան

Հայ ժողովուրդի պատմաբանական երթին եւ ինքնաճանաչման նուիրումը հանրագիտական գրականությանը կոթողական նոր նուաճումով մը հարստացաւ՝ Մայքլ Բաբայեանի «Յուշամատեան Անկախութեան-Հայաստանի Հանրապետութեան 1918-1921թթ. Պետական Գործիչները» հատորին հրատարակութեամբ, որուն խմբագիրն է Վլատիմիր Յարութիւնեան:

Վերջապէս մեծ բաց մը գոցուեցաւ եւ համապարփակ արխիւային ու պատմաքննական լոյսի տակ բերուեցաւ հայոց նորագոյն պատմութեան ամենէն վճռորոշ, այլեւ միաժամանակ ամենէն քիչ ուսումնասիրուած, մինչեւ իսկ անտեսուած փուլին համապատկերը՝ Հայաստանի Հանրապետութեան ստեղծման, պետականակերտումին եւ խորհրդային բիրտ ուժի տակ ազատագրման ու գաղութայնացման ժամանակաշրջանի մեծաւանդ գործիչներուն եւ անոնց իրագործումներուն ամբողջ հումքն ու ատաղճը գեղատիպ ու ճաշակաւոր՝ խոշոր չափի 460 էջ ծաւալով հատորի մը մէջ խտացնելով:


Առաջին հերթին ողջունելի է Մայքլ Բաբայեանի աշխատութեան հանրագիտական ընդգրկումը, որ կու գայ շեշտելու ոչ միայն Հայաստանի Հանրապետութեան 1918-1921թթ. պետական գործիչները անուն առ անուն եւ վաստակ առ վաստակ հայոց սերունդներու ազգային յիշողութեան մէջ ամրագրելու անհրաժեշտութիւնը, այլեւ հայ պատմաբանական միտքի օրակարգին առաջնային հարցերէն մէկը դարձնելու համազգային մեր ժամանակների այդ դարակազմիկ ժամանակաշրջանը ամբողջական ու սպառիչ հետազօտման, յայտնաբերման ու ըստ արժանոյն լիարժեք գնահատման արժանացնելու անյետաձգելի հրամայականը:

Ի վերջոյ Մայքլ Բաբայեանի իրագործած աշխատասիրութիւնը կը նմանի արհարծակ բացող հոգեմտաւոր սնունդի. որքան ճաշակեւ, այնքան կը շեշտուի ատելին համտեսելու պահանջը:

Հայաստանի Հանրապետութեան ստեղծման, գարգացման եւ խորհրդայնացման՝ անկման այդ երեք տարիներու պատմութեան վերաբերեալ պոլշեիկեան, ապա եւ խորհրդային պատմագրական նենգափոխութեան գործած ատերը այնքան համատարած ու խորքային է, որ հայ ազգային յիշողութիւնը ապա-պոլշեիկացնելու եւ վերականգնելու համար պէտք ունինք Մայքլ Բաբայեանի օրինակով երիտասարդ պատմագետներու ողջ սերունդի գօրաշարժին եւ համադիր աշխատասիրութեան:

«Անկախութեան Յուշամատեան»ը փաստօրէն իր տեսակին մէջ հանրագիտական-պատմագրական

երախայրիքն է վերանկախացեալ Հայաստանի Հանրապետութեան օրօք ծնած ու կազմաւորուած երիտասարդ սերունդին, որուն ինքնատիպ ներկայացուցիչներէն մէկը ըլլալով՝ Մայքլ Բաբայեան կամաւորաբար ստանձնած է յանձնառութիւնը պոլշեիկեան՝ խորհրդային դարաշրջանի կեղտաշուրթերէն մեր ազգային յիշողութիւնը մաքրագտելու տիտանական գործին:



Կարեւորութեամբ ընդօժեւի է, որ հատորի յառաջաբանին եւ ներածութեան մէջ շեշտելով հանդերձ, որ ինք ամբողջապէս եւ անտեղիտալիօրէն լծուած է սեփական ժողովուրդին ազգային անաղարտ յիշողութիւնը վերականգնելու գաղափարական պայքարին՝ Մայքլ Բաբայեան հետեւողականօրէն նախանձախնդիր է, որ իր աշխատութիւնը անդին չանցնի առարկայական ու ճշգրիտ տեղեկութեանց վաւերական եւ արժանահաւատ աղբիւրը ըլլալու սահմաններէն:

«Անկախութեան Յուշամատեան»ի գիտական արժանիքներու շարքին յատուկ մատնանշումի արժանի է հեղինակին կիրարկած կենսագրական տուեալներու եւ պատմական իրողութեանց բազմակողմանի հարստացման ու ստուգման եղանակը: Արխիւային փաստաթուղթերու եւ ներկայացուած գործիչներու անձնական արխիւներուն կողքին, Մ. Բաբայեան փնտռած, գտած եւ ի մի բերած է Հայաստանի անկախութիւնն ու ազատ Հանրապետութիւնը նուաճած գործիչներու ժառանգորդներուն՝ շառաւիղներուն մօտ գտնուող կամ անոնց յիշողութեան մէջ պահպանուած տեղեկութիւններն ու վկայութիւնները, որոնք նախ կը հարստացնեն աշխատասիրութիւնը, ապա՝ առանձին դէմքերու եւ դէպքերու վերաբերեալ խորացման գացող հետազօտութեանց եւ նոր բացայայտումներու լայն դուռ կը բանան:

Բնական է, որ ընթերցողը հատորը կը փակէ հեղինակին ուղղուած այն ակնկալութեամբ, որ Մ. Բաբայեան կանգ չառնէ այսքանով: Այսինքն՝ հեղինակը յայտնօրէն կը տիրապետէ հսկայական պաշարի եւ ի վիճակի է Հայաստանի Հանրապետութեան հիմնադիր սերունդին

նուաճումները, հաւաքական թէ անհատական իրագործումներու առումներով, պատմաբանական լրացուցիչ քննարկման ու խորացման լուսարձակին տակ առնելու:

Հատորի շարունակութեան, ամբողջացման կամ ալ արդէն պատմաքննական ընդգրկումով Հայաստանի Հանրապետութեան հիմնադիր կերտիչներու գործին, վարքագիծին եւ գաղափարական կտակին մասին համապարփակ լուսաբանութեան կարիքն ու ծարաւը ունի ողջ հայութիւնը: Ոչ միայն պոլշեիկեան մուրճ-մանգաղին տակ իր յիշողութեան օտարացումը հայրենի հայութիւնը, այլեւ տարագրութեան մէջ լաւագոյն պարագային դաշնակցական վարիչներու դասա-

ազգային-քաղաքական յիշողութիւնը վերադարձնելու ու վերականգնելու արժանապատիւ առաքելութեան:

«Յուշամատեան Անկախութեան» գիրքը ինքնին կը վկայէ, որ գաղափարական պաշտամունքի հասնող երկիւղածութեամբ հեղինակը հակած է ազատ ու անկախ Հայաստանի Հանրապետութեան իւրաքանչիւր գործիչի կենդանագիրը կազմելու աշխատանքին վրայ: Միեւնոյն երկիւղածութեամբ կը վարակուի հատորին ընթերցողը, երբ կը թերթատէ գեղատիպ հրատարակութիւնը ու միատեղ տպուած հայերէն եւ անգլերէն գրութիւններով կը ծանօթանայ մեր պետականութեան հիմնադիր կերտիչներուն:

Անշուշտ, ընթերցողին համար անհանգստացնող հանգամանք է այն իրողութիւնը, որ հատորը կիրարկած է պոլշեիկեան, այլ ոչ թէ մերուպետան ուղղագրութիւնը, ինչը խոտոր կը համեմատի ապա-պոլշեիկացման եւ ազգային յիշողութեան վերականգնման ուղղութեամբ հեղինակի հիմնական ու ընդհանուր առաջադրանքին հետ: Կարելի է յուսալ, որ հատորի յաջորդ տպագրութեան պարագային սըրբագրուի ատիկա:

Իր ամբողջութեան մէջ Մայքլ Բաբայեանի «Յուշամատեան Անկախութեան» գործը կը հանդիսանայ հպարտութիւն ջրղեղող անկիւնաքար մը՝ մեր ժողովուրդի նորագոյն պատմութեան ամենէն լուսաւոր ժամանակաշրջանը խորհրդային լուծին պարտադրած խաւարէն ձերբագատելու եւ լոյսով ողողուած իր փառաւոր պատուանդանին արժանացնելու համազգային մեր գարթօնքին շարունակուող երթին մէջ:

Վարձքը կատար՛ր, Մայքլ:

**ԺՈՂՈՎԻ ՀՐԱԷՐ**

**Համազգայինի «Ն. Աղբալեան» մասնաճիւղի 35-րդ անդամական ընդհանուր ժողովի Բ. նիստը պիտի գումարուի Կիրակի, 1 Դեկտեմբեր 2019-ի առաւօտեան ժամը 10:00-ին ԱՄՇ Տան «Լ. ՇԱՆԹ» սրահէն ներս: Համազգայնականներէն կը խնդրուի ներկայ գտնուիլ նիստին: 7-ի «Ն. Աղբալեան» Մասնաճիւղի Վարչութիւն**

ՎԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ

Ս. ԵՐՐՈՐԳՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻ

ՎՈՒՆԱԿՐՈՒԹԵԱՆ

**ԱՐՇԻ. Տ. ՊԵՏՐՈՍ ԱՐՔ. ՄԻՒՐԱԹԵԱՆԻ**  
Առաջնորդ, Բեդիոյ Թեմի Կաթողիկէ Հայոց

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ

Ս. ԵՐՐՈՐԳՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՅԱՆՉՆԱԽՈՒՄԲԻՆ

**ՅՈՐԵՆԵՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՍՈՒԹԻՒՆ**  
**ՆՈՒԻՐՈՒՄ**

**ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԳԱՊԵՏԻ ԾՆՆԻԵԱՆ**  
**150 ԱՄՏԱԿԻՆ**

Կիրակի, 1 Դեկտեմբեր 2019, երեկոյան ժամը 7,00-ին, Ս. Երրորդութիւն «Զուարթնոց» եկեղեցւոյ Ազատեան սրահէն ներս, Նոր-Գիւղ:



## ՀԵՏԵԵԼՈՎ ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆԻ ՈՏԱՐՅԵՏՔԵՐՈՒՆ (ծննդեան 135-ամեակին առիթով) Գ.



Լեւոն Շանոյեան

### ԱՌՋԻՆԵԿ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

«Սարսուռներ»ը վտիտ հատոր մըն էր: Բանաստեղծը իր իսկական դիմագիծը տակաւին յայտնաբերած չէր այստեղ: Իր ձայնը դեռ երկչոտ էր, հեւքը՝ դողդոջուն, քնարին լարերը դեռ տկար էին: Չգալի էր սակայն, որ 21 տարեկան արուեստասէր այս տղուն կուրծքին տակ կը բաբախէր, կը սարսուռ գուրթի, խիղճի, բարիի ու գեղեցիկի համար տրոփող յորդուն սիրտ մը:

Հատորը կը բացուէր «Մուսային» խորագրեալ երկարաշունչ քերթուածով մը (տեսակ մը բանաստեղծական հաւատոյ հանգանակ), ուր երիտասարդ բրգակիցին կը յայտարարէր իր կոչումը՝ նուիրուելու քերթողական արուեստին: Խօսքն ուղղելով մուսային՝ Վարուժան ի միջի այլոց կ'աղերսէր.

**Թեւերս, ուղիղ դէպի բարձունքդ վսեմ՝  
Քնարդ կ'ուզես, կ'ուզես քնարդ. երկնցո՛ւր.  
Կը տրոփէ մէջս երգերու սաղմն. կը սպասեմ.  
Ե՛րբ պիտ' տրուի անոր ծնուցիչ քու համբոյր:**

**Տո՛ւր, ով Մուսայ, տո՛ւր այդ քնարդ բռնած.  
Պիտ' իմին սիրտս, իմին աշխարհս ըլլայ ան՝  
Ուր գաղափարն՝ պիտի բնակի գերդ Աստուած,  
Վեհ գաղափարն աչքերով բո՛ց, թռիչքով լա՛յն:**

Ու տեսե՛ք, թէ Մուսան ինչպէս կը պատասխանէ բանաստեղծին թախանձանքին.

**«...Ի՛նչ, այս քնա՞րդ կ'ուզես, քնար սեւ փայտե՛.-  
Այս՝ վերքերու գործի մըն է, այս է հուր.  
Ապագադ է, այս՝ դագաղդ է, անո՛ւնդ է՝  
Ես անյողդողդ՝ ըսի անոր.  
-Ըլլա՛յ, տո՛ւր:**

Մուշեղ Իշխան, իր «Արդի Հայ Գրականութիւն» դասագրքին Գ. հատորին մէջ (1975, Պէյրուս) հետեւեալ տողերով կ'ամփոփէ «Սարսուռներ»-ու բովանդակութիւնը.

**-Հոն տեղ գտած քերթուածները մտքի եւ հոգիի առաջին սարսուռներն են, որոնց կը պակասի տակաւին պէտք եղած շերտութիւնը: Կ'երգէ քիչ մը ամեն բան - մարդկային թշուառութիւններ, ունայնութեան եւ յաւիտեականութեան խորհուրդը եւ այլն: «Սարսուռներ»ը շնորհալի բանաստեղծի մը երեւումը ծանուցանող գեղեցիկ խոստում մըն է լոկ:**

Այս առջինէկ հատորիկը, սակայն, բնաւ գոհ չթողուց բանաստեղծը: Ս. Ղազարու տպարանին այս արտադրութիւնը կատարուած էր հեղինակին պատկերացումներուն եւ ակնկալիքներուն հակոտնեայ ուղղութեամբ: Վարուժան դժգոհ էր արդիւնքէն, Նոյնիսկ չափազանց գայրացած էր:

Ի՞նչ պատահէր էր:

Վարուժանի երեւանեան նամակակիին մէջ առատ նիւթ կրկնաք գըտնել «Սարսուռներ»-ու հրատարակութեան առթած դժգոհանքին դրդապատճառներուն մասին:

Յայտնի կը դառնայ, որ Ս. Ղազարու տպարանին վարիչ վարդապետները (տպարանի տեսուչ Զ. Սուքիաս Եփրիկեանն էր) բանաստեղծին այս առջինէկ քերթողագիրքը կրճատէր էին լայն չափով ու անտեղի նկատումներով, **առանց հեղինակին կարծիքն ու արտօնութիւնը առնելու:** Վարուժանի կողմէ ներկայացուած ձեռագիր տետրին երկու երրորդը գեղջուած էր...: Հրատարակելի 55 քերթուածներէն տպուած էին լոկ 18-ն: Հրատարակիչ կողմը շատ մը բանաստեղծութիւններ դուրս թողած էր հատորէն, անոնց նիւթերը անպատշաճ նկատելով...: Փաստօրէն, նախորդ տարի «Գեղունի»-ի մէջ լոյս ընծայուածներն էին լոկ՝ որ մեկտեղուէր էին կողքի մը տակ: Ուստի, հրատարակուածը նկուն պրակ մըն էր պարզապէս, տպուած՝ 500 օրինակով:

Չանագ աններու գրած իր նամակներուն մէջ՝ Վարուժան կը գանգատէր այս քնահաճ վարմունքէն ու կ'ըսէր որ իր ձեռագրերուն լաւագոյն բաժինները անարդարօրէն դուրս մնացեր էին նորատիպ հատորէն: Յետոյ, շատ վրդոված էր, որ Զ. Եփրիկեան այս պրակին տպագրութիւնը «շնորհ» մը սեպած էր՝ միաբանութեան կողմէ առ երիտասարդ բանաստեղծը...:

Շնորհ: Ի՞նչ շնորհ:

Ան սակայն անհամբեր կը սպասէր, թէ ի՞նչ պիտի գրէին իր այս գրքոյկին մասին հայ մամուլին մէջ. մեր երեւելի քննադատները ի՞նչ խօսք պիտի արտասանէին:

Եւ իսկապէս, երկու կարեւոր գրախօսականներ երեւցան այս մասին, մին՝ «Բազմավէպ»-ի մէջ, միւսը՝ Փարիզի «Անահիտ»-ին:

«Բազմավէպ»-ի գրախօսականը ստորագրուած էր Զ. Ներսէս Անդրիկեանի կողմէ: Բնիկ մշտեցի երիտասարդ վարդապետ մըն էր այս, Վարուժանէն քակի մը տարի մեծ, այդ շրջանի փայլուն մտաւորականներէն մին, որուն անունը յաճախ կ'երեւէր Ս. Ղազարու պաշտօնաթերթին մէջ՝ գրա-

կան ու բանասիրական ուսումնասիրութեանց ներքեւ:

«Բազմավէպ»-ի 1906-ի թիւ 5-ին մէջ, «Դանիէլ Վարուժանի Բանաստեղծութիւնը» խորագրեալ իր ակնարկով, այս վարդապետը նախ կը գնահատէր բանաստեղծին գուտ աշխարհաբար գրելու սկզբունքը, ապա կը թելադրէր որ ան միանգամընդմիջ տեղանայ կաշկանդիչ յանգերու գերին դառնալէ: Կը հաստատէր միաժամանակ, որ բանաստեղծին էջերը թարմ են, շղուտ եւ գօրաւոր գագացումներով լի: Կը շեշտէր, որ ցաւատանց գգայնութիւնը տիրապետող է անոր մօտ: «Առտնին սուգէն՝ ազգային տագնապին անցեր է, անկից՝ մարդկութեան մեծ վշտին»: Ու եզրափակելով իր խօսքը, կը պատմէր մանրավէպ մը.- Մոլիէր Փարիզի մէջ կը ներկայացնէ իր առաջին կատակերգութիւնը: Աւարտին, երբ անհամբեր կը սպասէր հանդիսատեսներէն գալիք արծագանգներուն, սրահէն մէկը բարձրածայն կ'աղաղակէ. «Սի՛րտ առ, Մոլիէր, ա՛յս է ճշմարիտ կատակերգութիւնը»:

Ու հիմա Անդրիկեան վրդ. կ'աւելցնէր. «**Հա՛րկ է արդեօք հոս ալ կրկնել այս խօսքը՝ որպէսզի Դանիէլ Վարուժան քաջալերուած՝ շարունակէ տալ մեզի անելի մեծ ստեղծագործութիւններ:**»

Իսկ «Անահիտ»-ի գրախօսականը, տպուած՝ հանդէսին Յունիս-Յունիս 1906-ի թիւին մէջ, ստորագրուած էր խմբագրին՝ Արշակ Չօպանեանի կողմէ:

Չօպանեան ի սկզբանէ նկատել կու տար, թէ «Դանիէլ Վարուժան մին է այն անձնաւորութիւններէն, զորս Մուրատ-Ռափայելեան վարժարանը կըրնայ հպարտանալ արտադրած ըլլալուն»: Հանգիտութիւններ կը նշմարէր անոր ու Դուրեանի միջեւ: Համոզում կը յայտնէր տակաւին, որ «Երոպացիներէն՝ Հիւկոն, ամենէն անելի իր հոգիին խօսած է եւ հոն իր մեծ արեւն քակի մը ճառագայթ ձգած»:

Չօպանեան հիացական ակնարկներով կը թուէր նորատիպ հատորիկէն 7-8 քերթուած ու կը հաւաստիացնէր, թէ անոնք ուժեղ կտորներ են ու կը պարզ են բանաստեղծական շքեղ թռիչք մը: Մատնանշումներ կ'ընէր բանաստեղծին կարգ մը թերութիւններուն մասին, կ'ուղղէր խորթութիւններ ու վերջաւորութեան՝ կ'ըսէր որ «**իրմէ՛ մեծ բաներ ու կատարեալ բաներ կը յուսանք: Իր սկզբնաւորութիւնը մին է ամենէն շքեղներէն, որ հայոց մէջ յայտնուած ըլլայ:**»

### ՀԱՄԼԱՍԱՐԱՆԱԿԱՆ ՎԿԱՅՎԱԿԱՆ ՄԸ Ի ԽՆԴԻՐ

Մուրատ-Ռափայելեանէն ետք՝ Դանիէլ Վարուժան համալսարանական ուսումնառութեան համար մեկնեցաւ Պելճիքա, Կանտ քաղաքը:


Պատահաբար ու անսպասելիօրէն է որ Վարուժան ինքզինք գտաւ Կանտի մէջ:

Ի սկզբանէ, բարձրագոյն ուսման համար իր նախընտրութիւնը կ'երթար Լոզանին (Չուիցերիա): Բայց Միխիթարեանները, որոնք յանձնառու եղած էին ապահովել ու հոգալ իր համալսարանական թոշակը եւս, յարմար դատեցին Կանտը ու զինք հոն դրկեցին: Թոշակը պիտի տրամադրուէր Մուրատ-Ռափայելեանի հիմնադրամէն:

Վարուժան Կանտի մէջ մնաց 4 տարի (1905-1909), հետեւելով քաղաքական-ընկերային գիտութիւններու, նաեւ՝ գրական մասնակի դասընթացքներու:

Կանտի այս չորս տարիները սակայն նիւթական նեղութեանց, հնկնութեան եւ անձկութեան շրջան մը եղան իրեն համար, որովհետեւ միշտ ու միշտ յապաղեցան Վենետիկէն ուղարկելի դրամական այն անհրաժեշտ յատկացումները, որոնցմով Վարուժան պիտի կարենար մէկ կողմէ իր համեստ ապրուստը հոգալ, մէկ կողմէ ալ՝ վճարել համալսարանին թոշակները...: Վարուժան կը ստիպուէր անդադար նամակներ յղել Մուրատ-Ռափայելեանի տեսչութեան ու իրեն մտերիմ վարդապետներու՝ յիշեցնելով իր նիւթական արգահատելի պայմանները եւ դրամական յատկացումներու շուտափոյթ առաքման անհրաժեշտութիւնը...: Երեւան տպուած իր «Նամականի»ն լեցուն է այսօրինակ աղերսանքներով, նաեւ՝ կծու ակնարկութիւններով կամ կշտամբանքներով, որոնք թիրախ ունին առաւելաբար Մուրատ-Ռափայելեանի այդ օրերու տեսուչ Զ. Ստեփան Սարեանը:

Ըստ նախապէս գոյացած համաձայնութեան մը՝ Մուրատ-Ռափայելեանի տեսչութիւնը ամէն ամիս 100 Ֆրանք պիտի ուղարկէր Վարուժանին: Այս յատկացումը փոքր գումար մըն էր, որ համալսարանական ուսանողի մը տարրական պէտքերն ու սնունդը հոգալու հագիւ կը բաւէր: Եւ ատիկա՛ մի՛շտ կ'ուշանար, կը յապաղէր: Վարուժան երբեմն կը ստիպուէր պարտքի դրամ առնել իր դասընկերներէն, ամսուան երեսուն օրերը կ'անցընէր աներեւակայելի խնայողութիւններով: Անգամ մը, իր երբեմնի ուսուցիչներէն Զ. Յովհաննէս Թորոսեանին ուղղեալ նամակի մը մէջ պոռթկացեր էր իր ամբողջ գայրոյթը. «**Ահա ձմեռ եկաւ եւ ես ամառնային զգեստով եմ, եւ այնպիսի վերարկույով մը, որով աղքատ գործաւորի մը ողորմութիւն միայն կը տրուի...**» (Նոյեմբեր, 1908): Այլ նամակի մը մէջ ալ, ուղղեալ՝ Վարդգես





## Աշակերտական Անկիւն

### ԻՄ ՄԵԾ ՆԱՅԻՄ



Հրակ Լ. Լեւոնյան

Մեծ հայրս, մօրս հայրը, ութսունութ տարեկան է։ Ան իր կեանքին ընթացքին շատ դժուարություններ տեսած է, շատ աշխատած է, միևնույն որ տեղ հասած է։ Երբ տասներեք տարեկան էր, հայրը կը մահանայ եւ ընտանիքին ապրուստի հոգը իր ուսերուն կը մնայ։ Կը ստիպուի դպրոցը ձգել։ Քանի մը այժ կը գնէ եւ կը բարձրանայ լեռ։ Չինք շատ կը նեղեն ոստիկանները, որովհետեւ արգիլուած էր այժ պահելը։ Միշտ լեռներու վրայ՝ մեծ հայրս ձեռք կը բերէ փորձառութիւն եւ քաջութիւն։ Ո՛չ մէկ դժուարութեան առջեւ տեղի կու տայ։ Դպրոցին պակասը կը լրացնէ շատ գիրք կարդալով, կ'ամբարտ գիտելիքներ եւ իմաստութիւն։



Մեծ հայրս՝ շատ բարեսիրտ ու շատ զարգացած։ Թեւ տարիքոտ, բայց միշտ աշխուժ է։ Ան ամէն Աստուծոյ տուած օր, առաւօտեան ժամը 4:30-ին կ'արթննայ, պարտեզին կից տան պատշգամին լեղի սուրճը կը խմէ եւ քալելով կ'երթայ պարտեզ, որ տունէն բաւական հեռու կը գտնուի։ Երբ պարտեզի գործ չ'ունենար, ինզիմը կը զբաղեցնէ աւելի թեթեւ աշխատանքով։

Ձիթերով լեցուն մեծ հօրս հետ ժամանակ անցընելը շատ հաճելի է։ Ան լաւ պատմող է։ Մեծ հետաքրքրութեամբ մտիկ կ'ընեն՝ անոր պատմածները։

ԺԱ. Կարգ

Քեսապի Ազգ. Ուսումնասիրաց Միացեալ Ծննդարան

### ՇԱՐԵԿԱՆ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ ՄԸ ԶԳԱՅԱԿԱՆ ԻՄԱՑՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

«Ուստի ամէն ինչ, որ կ'ուզէք որ մարդիկ ձեզի ընեն, դուք ալ անոնց այդպէս ըրէք, քանզի այս է օրէնքը ու մարգարէները»։ Մատթ7:12

աշխատանքին մէջ ներդրուեցաւ եւ միտք, եւ զգացում։ Լայնածաւալ բնոյթ ունեցող այս նիւթը դասախօսը մատչելի եւ բաժանմունքային դասաւորումով առաւել եւս հասկը-



Յոգեբանական լուրջ միտք մը կայ այս խօսքին մէջ, որ արտասանուած է Մատթեոս աւետարանիչին կողմէ։ Արդարեւ, մեկնելով նման գաղափարէ, Հայ Աւետ. Բեթել եկեղեցւոյ Չոյգերու Յանձնախումբին

Նալի եւ հետաքրքրական դարձուցած էր ունկնդիրին համար։ Աժմեական օրինակներով, մասնագիտական վերլուծումներով եւ գրուցային մաշտապով դասախօսութիւնը հասաւ իր աւարտին։

### ԱՇՈՒՆ

Տիգրան Մանճիկեան

Աշուն, աշուն, սիրուն աշուն, Այնքան սիրուն ու զարդարուն։

Տերեւներդ կարմիր-դեղին, Չարդարած են դաշտն ու այգին։

Երբ կը փչէ հովը անքուն, Տերեւներդ նման թռչուն։

2. կարգ

Քեսապի Ազգ. Ուսումնասիրաց Միացեալ Ծննդարան



Նախաձեռնութեամբ, Կիրակի, 17 Նոյեմբեր 2019-ին, Բեթել եկեղեցւոյ «Շիրաճեան» սրահէն ներս հոգեբանական հարցերու խորհրդատու տիկին Լանա Պոյնարեան-Մալաքեանի ներկայացումով «Զգացական Իմացութիւն» խորագիրով դասախօսութիւն-գրոյց մը տեղի ունեցաւ։

Այնուհետեւ համայնքապետ Վեր. Յարութիւն Սելիմեան գնահատեց տիկին Լանան իր շահեկան դասախօսութեան համար, ապա յայտնեց, որ մենք ամէն օր դէմ առ դէմ կու գանք զգացական իմացութեամբ հասկնալու, ըմբռնելու եւ կամ արտայայտելու շատ մը վի-

### ՔԵՍԱՊ

Շուշի Ղազարեան

Քեսապը, իմ գեղեցիկ գիւղն է, իմ փոքրիկ Հայաստանը, իմ ծննդավայրը։

Ես ծնած եմ եւ կը մեծնամ հոն։ Հոն են իմ դպրոցը եւ եկեղեցին։

Օդը մաքուր է, ունիկանաչ պարտեզներ, այգիներ եւ գուլալ արփիւրներ։

Քեսապին աշխատասեր եւ հիւրասեր է։ Ան կը վայելէ իր պարտեզներուն Աստուածատուր բարիքները։ Ես

շատ հպարտ եմ, որ քեսապի եմ։ Ուր որ ալ երթամ, չեմ կրնար մոռնալ գեղեցիկ ծննդավայրս։

2. կարգ

Քեսապի Ազգ. Ուսումնասիրաց Միացեալ Ծննդարան



Դասախօսութիւնը սկսաւ տիկին Սեւան Տեր Սահակեանի բարի գալուստի խօսքով, ապա դասախօսին կենսագրականին ներկայացումով, որմէ ետք Լանա Պոյնարեան\_Մալաքեան նիւթին մատուցումը սկսաւ ձեռային աշխատանքով մը։ Այդ

ճակներ, որոնք մեզ ընդհանրապէս կ'առաջնորդեն դէպի ընկերային իմացութիւն։

Հունկ, համայնքապետ Վերապատուելին աղօթքով փակեց դասախօսական հաւաքը։

Հուրիկա



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԼԵՂՈՒՎԱԿԱՆ ՈՐԱԿ

Փորձը ցոյց տուած է, որ հայկական դպրոցները պետական ամբողջական ծրագրերը լիովին ընդունելով և իրագործելով հանդերձ, երկրի լաւագոյն դպրոցներու կարգին դասուելով հանդերձ՝ յաջողեցան հայերէնը ընդունելի մակարդակի վրայ պահել, հայախօսութիւնը պատշաճ մաքրութեամբ դպրոցէն տուն վերադարձնել, ոչ թէ որովհետեւ հայերէնի լաւ ուսուցիչ կամ ուսուցիչներ ունէին միայն, այլ որովհետեւ դպրոցը նախ եւ առաջ ունէր եւ ունի պաշտօնէութեան մէջ հիմնական ու պատասխանատու հայախօս քանակ մը, որ միահամուռ կերպով կը հետեւի աշակերտութեան հայերէն բանաւոր խօսքին եւ անոր մաքրութեան: Դպրոցը ունի հայերէնը ներքին կենսքին մէջ հաղորդակցութեան միակ լեզուն վերածելու մարտավարութիւն: Անոր համար բժախնդրութեամբ կ'ընտրէ իր պաշտօնէութիւնը: Առանձնացնելը:

1.- Հայախօս պաշտօնէութիւն՝ վարորդ, դռնապան, հսկիչ, քարտուղար-հաշուապահ, տնտեստնտեսուհի, տարրալուծարանի եւ գրադարանի պատասխանատու եւ այլն: Ոչ հայախօս հայկական վարժարանը թիրիմացութիւն է: Փոքրիկը դպրոց գալու ճամբուն վրայ եւ դարպասին մօտ ու առաւել եւս՝ շրջափակին մէջ պիտի զգայ, որ ասիկա ի՞ր դպրոցն է եւ իրը՝ հայերէնն է: Օթոքարի վարորդը կանգ առնի վրայ ժպտացող «բարի լոյս»ով պիտի ընդունի քնատ աշակերտը եւ երթեւեկութեան կանոններու մասին ի հարկէ հայերէնով պիտի խօսի, դռնապան «հայրիկը» հայերէնով պիտի դիմաւորէ փոքրիկները դպրոցէն ներս, հսկիչ ուսուցիչները պիտի հետեւին բակին մէջ խօսող-խնդացող, բողբոջող-դժգոհող տղոց իւրաքանչիւր բառին, քարտուղար-հաշուապահէն փոքրիկը պիտի սորվի հաշուապահ, քարտուղար, անձնագիր, փաստաթուղթ, ընտանեկան տետրակ, մասնավճար եւ այլ բազում բաներ, տնտես մայրիկն ու հայրիկը պիտի չունենան այն ըմպելիներն ու ուտեստները, որոնց հայերէնը չիւնէ տղոց շրթներէն: Հապա ի՞նչ ահաւոր բան է, եթէ դպրոցի գրադարանավարը հայերէն կարդալ չի գիտեր, հայ թերթերէն բան չի հասկնար, հայ գրականութեան ինչ ըլլալը չի գիտեր: Ես շատ լաւ գիտեմ այն աները, որ կը ստեղծեն դպրոցի այս պաշտօնէութեան իրենց օտարախօսութեամբ կամ օտար բաներով ու գռեհկանութեամբ լեցուն հայերէնով:

2.- Հայախօս ու իրենց մարգերուն մէջ հայագիտական պատշաճ պաշար ունեցող մարզանքի, երգի եւ երաժշտութեան, համակարգիչի, արուեստի եւ նկարչութեան դասանիւթերու ուսուցիչներ: Այս նիւթերը ամէն տեղ պետական կրթական ծրագիրին մաս կը կազմեն, բայց հանգիստ կերպով կրնան դասաւանդուիլ հայերէնով ու հայ բովանդակութեամբ: Հիմա պատկերացուցէք, որ օտարախօս ուսուցիչը դասարան կը բերէ ծաղկաման մը եւ

ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Յակոբ Չոլաքեան

մէջը՝ կակաչ մը: Աշակերտները ե՞րբ եւ ո՞ր պիտի սորվին, որ այս ամանը ծաղկաման է, ծաղիկը կակաչ է, ծաղիկին հասակը՝ կոթուն, յետոյ տերեւ, փերթեր ու բաժակ եւ նեկտար: յետոյ հասկնալ բուրել, հոտիլ ու հոտոտալ բառերուն տարբերութիւնը: ԶԷ՞ որ գիտութիւն կամ իրագիտութիւն դասանիւթը ինք կ'անցնի օտար լեզուով: Ա՛լ չենք խօսիր գոյներուն, գոյներու, խառնուրդին, վրձինին, ներկատեսակներուն ու երանգապանակին մասին... Ալ ո՞ր պիտի ճանչնայ դպրոցականը, որ Յովհաննէս Այվազովսկին, Մարտիրոս Սարեանը, Գառգուն իր նկարիչներն են: Պատկերացուցէք, որ մարգանքի ուսուցիչը օտարախօս է կամ իր հայերէնը կը խճողէ տուեալ պահու մարգական օտար բաներով: Սարսափելի շատ: Անոր պարտականութեան մէջ չի՞ մտնէր մարմա-



մարգութեան պահուն մարդակազմութեան յատուկ բաներու գործնական փոխանցումը, հայկական թերթի մը կամ կայքի մը մարգական էջին ծանօթացումը, մարգական պատի թերթ մը պատրաստել տալը աշակերտներուն: Զծաւալինք, բայց հաստատեմք, որ այսպիսի դպրոցները միայն սփիւռքահայ դպրոցներ են, հնարաւոր ամէն միջոց ու հնարաւոր պահ հայերէնխօսութեան մղող, աշակերտութեան լեզուն հարստացնող, մաքրող ու հայերէնի հանդէպ պատասխանատուութիւն արթնցնող դպրոց: Ես չեմ կրնար համակերպիլ այն գաղափարին հետ, որ հայ դպրոցը անարտած է իր պարտաւորութիւնները եւ ա՛լ ընելիք չունի: Կը ճանչնամ այդ պարտաւորութիւնները երբեք չկատարած ու չկատարող դպրոցներու խաժամուժ մը: Ի՞նչ բանի կը ծառայեն այդ դպրոցները՝ յարանուանական համայնքի մը պահպանումի՞ն, կուսակցական շարքայիններ պատրաստելու՞ն: Միւս կողմէ՛ ես կը ճանչնամ դպրոցներ, ուր պարբերաբար այս պաշտօնէութիւնը ժողովի կը հրաւիրուի ճիշդ այս հարցը օրակարգ ունենալով: Նկատողութիւններ կը տրուին, պահանջք կը ներկայացուի, բառացանկեր կը տրամադրուին պաշտօնէաններուն, լեզուական արատներ կը մատնանշուին: Բառացանկեր կը տրամադրուին աշակերտութեան, կը հրահանգուի թաւաբանութեան, կենսաբանութեան, երկրաբանութեան ու պետութեան մասին թարգմանաբար (չափազանց կարելոր) պատի թերթեր պատրաստել: Դպրոցի

իւրաքանչիւր պաշտօնէայ գիտակից է իր այդ պարտականութեան եւ ոչ թէ պատասխանատուութիւնը կը բարդէ հայերէնի ուսուցիչին վրայ, բայց կը դիմէ անոր օգնութեան:

Կարծամանակ, երբ դպրոցները կը ճանչցուէին տնօրէնի անունով, Կրթասիրացի փոխարէն «Պողարեանի դպրոց» կ'ըսէին, Ուսումնասիրացի փոխարէն «Լեւոնեանի դպրոց» կ'ըսէին, Յովակիմեան-Մանուկեանի փոխարէն «Թովմեանի դպրոց» կ'ըսէին, ինչպէս որ «Պերպերեան» կը կոչուէր արդէն իր իսկ կենդանութեամբ գործող Ռեթեոս Պերպերեանի հիմնած ու վարած դպրոցը: Անոնք ունէին հայագիտական ու մանկավարժական հսկայ հիմնութիւն՝ դպրոցավարական ու կազմակերպչական մեծ կարողութիւններու կողքին: Հիմա մեր տնօրէններէն չ'ակնկալուիր հայագիտական բաժինը լիցքաւորել, մանկավարժօրէն ճանապարհ բանալ դաստիարակելու ամառը, բայց անոնք առնուազն կազմակերպիչներ են, որ կրնան սփիւռքահայ դպրոցին դիմագիծ ու բովանդակութիւն տուող քայլեր առնել: Տնօրէնով պայմանաւորուած է քննարկումներու դաշտի գոյութիւնը եւ պաշտօնէութիւնը որոշ ուղղութիւններով գործառնի ենթարկելու գործը:

Ահա այսպիսի դպրոցավարութեան պայմաններու վերստեղծման կարիք ունի սփիւռքահայ արդի դպրոցը եւ իր հնարաւորութիւնները լաւագոյն կերպով գործածելու անհրաժեշտութիւն:

3.- Արտադասարանային եւ հայկական վարժարաններու ցանցի առկայութեան պարագային՝ միջդպրոցական միջոցառումներու, աշակերտական ինքնագործական ու խմբական աշխատանքներու կազմակերպում՝ թատերական ու երաժշտական ներկայացումներ, աշակերտական թերթի հրատարակութիւն, ասմունքի, ընթերցանութեան, ուղղագրութեան, բառագիտութեան, շարադրութեան, բանաւոր խօսքի, հայ երգի, Հայաստանի աշխարհագրութեան, Հայոց պատմութեան մրցումներ: Հոս է, որ երեւան կու գայ աշակերտին շնորհքն ու տաղանդը, հոս է, որ աշակերտին մէջ կը ծիլ ու կը ձեւաւորուի հակում մը, այսինքն սուր ու մնայուն հետապնդողութիւն մը հայագիտական ոլորտէ մարգի նկատմամբ: Պատկերացուցէք, եթէ չըլլային մեր աշակերտական պարբերաթերթերը՝ ուրկէ՞ պիտի ձեւաւորուէին սփիւռքահայ (ոչ միայն) հայ մամուլի, գրականութեան այսօրուան երախտաւորները: Կը նայիմ մեր այսօրուան գրական դաշտին, ու կը տեսնեմ, որ օրինակ, որքան շատ են Ալեքսի Գոլեճի «Գրասէր», Այնճարի Բարսեղ Գրաբարի վարժարանի «Շիրագ», Յառաջ վարժարանի «Մուսա Լեռ», Հայկաի Զարէն Եփփէ ճեմարանի «Բամբիռ» ու «Շիլեր»,

Մելգոնեան հաստատութեան «Այգ», Զուլթի վարժարանին «Ծիծեռնակ» եւ բազում ուրիշներու էջերուն մէջ մկրտուած մեր գրականութեան ու հայագիտութեան երախտաւորները, բառ ու բանի ծառայողները: Ամէնէն տարեցներէն մինչեւ ամէնէն երիտասարդները: անուններ չտանք: Լաւ է որ կարգ մը դպրոցներ տակաւին պատնէշի վրայ են: Ահա ասիկա գեղեցիկ անանդութիւններ, գործ սորովի ու պարտադիր կերպով պիտի պահէ դպրոցը: Միայն այդպիսով կ'ապրի ու զարգացման ընթացք կ'ունենայ դպրոցը:

4.- Արտադպրոցական եւ կիրակնօրեայ շրջապատ՝ սկաւառական-մարգական ակումբներ, կիրակնօրեայ հոգեւոր դպրոց, դպրաց դաս եւ այլն: Գաղտնիք չէ, որ մեր դպրոցները, գրեթէ ամէնուր, ունին արձակուրդային օրերուն աշակերտները ուղղելու տեղեր, եւ գաղտնիք չէ նաեւ, որ արտադպրոցական այդ միջավայրերը իսկական դպրոց եղած են նախորդ սերունդներուն: Այդ հնարաւորութիւնը ունին գրեթէ մեր բոլոր ամենօրեայ դպրոցներուն աշակերտները, եւ ոչ միայն: Այդ առաքելութիւնը կ'ակնկալուի մեր բոլոր պատանեաց ու պարմանուհիներու միութիւններէն, կիրակնօրեայ հոգեւոր դպրոցներէն, դպրաց դասերէն: Երբեք կարելոր չէ մեր անհատական մօտեցումը, թէ ի՞նչ կը կարդան, ի՞նչ կը լսեն հոն, կարելոր միայն հայերէնով շփումն է: Դեռ վերջերս կը խօսէի միջազգային լրատուական գործակալութեան մը թղթակիցին հետ, որ հայկական դպրոց չէ յաճախած, մօր կողմէ միայն հայ է, բայց ըլլալով ՀՄԸՄ-ի գաւակ՝ սահուն հայախօս է ու Հայ Դատի գիտակ մարտիկ մը իր ասպարէզին մէջ:

Ի հարկէ, դպրոց-միութիւն-եկեղեցի համագործակցութիւնը շատ անելի արդիւնաւետ պիտի դարձնէ աշակերտի արտադպրոցական առօրեայ կազմակերպումը:

Դժբախտաբար մեր դպրոցներու մեծամասնութիւնը ունենալով հանդերձ այսպիսի պայմաններ ստեղծելու հնարաւորութիւն՝ հայերէնախօսութեան եւ հայերէնի ուսուցման ամբողջ գործը վստահած է միայն հայերէնի ուսուցիչին եւ անոր տրամադրուած առաւելագոյնը 4-6 ժամերուն: Ո՞վ է եւ ի՞նչն է պատճառը, որ Պուլեոս Այրեսի, Ֆրեզկոյի, Սան Ֆրանչիսքոյի, Նոյնիսկ Պոթընի եւ Տիթոյի գերագանցապէս հայախօս ընտանիքներու գաւակները հայկական վարժարանին մէջ իսկ օտարախօս են: Ի՞նչ կ'ընէ ուսուցչակազմը, ի՞նչ ծրագիրներ կը մշակէ տնօրէնութիւնը, հոգաբարձութիւնը ի՞նչ դեմքերով կը համալրէ պաշտօնէութիւնը: Ի՞նչ պահանջք կը դրուի հայ դպրոցին վրայ: Ասիկա ամէնէն տխուր երեսն է շատ դպրոցներու:

Հայկական դպրոցները մեծ ճիգ չեն թափած հայերէնախօսութիւնը հայերէնի դասարանէն դուրս հանելու եւ ստիպած, որ հայկական դպրոցին մէջ ամէնէն օտարտի ուսուցիչը մնայ հայերէնի դասատուն՝ անօգնական մեղադրեալը:



## ՄՏԱՄԱՐԶԱՆՔ



ԽԱԶԲԱՌ (ՄՆ 321)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1												
2												
3												
4												
5												
6												
7												
8												
9												
10												
11												
12												

**Հորիզոնական**

- 1- Թռիչք, սլացք: Վայրի մեղու:
- 2- 16 էջով տետր: Հաստատական պատասխան:
- 3- Բայց: Ափսոս: Վաղնջական:
- 4- Մտերիմ: Հակառակ՝ տառի մը անունը:
- 5- Լսել: 5030:
- 6- Կտա: Սոսկալի:
- 7- Մասերը իրարու ազուցող կարթածել կոճակ:
- 8- Աման շինելու հող: Կրկին:
- 9- Հակառակ՝ 22: Բարբախել: Հակառակ՝ տարածքի միաուր:
- 10- Կողոպուտ: Արցախեան ազատամարտիկ Վարդան Ստեփանյանի ծածկանունը:
- 11- Զրիստոսի առաջին հրաշքին վայրը: 7001: Խօսք:
- 12- Կարմիրիլ:

**Ուղղահայեաց**

- 1- Վիզի ուռեցք: Կոճակի օղակ:
- 2- Երե: Կրկնուած ձայնաւորներ: Հակառակ եւ անվերջնատառ՝ արահետ:
- 3- Թանկագին քար: Իգական անուն:
- 4- Աղբիւր: Մտային մարզանք մը:
- 5- Արեւելահայերէն՝ ըսէ՛: Գրաբար՝ օր:
- 6- Մեղքը ջնջել: 604:
- 7- Շարունակ: Տարի: Լուսնի գանազան երեւոյթ:
- 8- Քնքուշ: Առաջին կինը:
- 9- Հակառակ՝ հրապուրուիլ:
- 10- Ճամբայ: 74: Հակառակ՝ տարի:
- 11- Երկբարբառ: Արաքս գետին այլ անունը:
- 12- Գուրգուրանք: 5000:

**ՍՈՒՏՈՒՆԵՐ (ՄՍ 320)**

Տեղաւորէ՛ (1-9) թուանշանները (9x9) քառակուսիներուն մէջ այնպէս, որ իւրաքանչիւր հորիզոնական եւ ուղղահայեաց տողի մէջ, ինչպէս նաեւ (3x3) տուփիկի մէջ մէկ անգամ արձանագրուին:

	5							6
3			7		8	5		
		4						1
2		9		4	7		8	
	8			2		4		7
	1							
			9	3				4
7		6			1			3
	4				2	9	6	

Պատրաստեց Մարինա Զիւլբրոշեան-Պօղիկեան  
**ՊԱՀՈՒՄԾ ԲԱՌ (ՄՊ 91)**

Միացրէ՛ք Մեծարեցի բանաստեղծութիւնները նշանակելով գտնէ՛ք պահուած բառը:  
Պահուած բառը 14 տառերէ կը բաղկանայ եւ կը ներկայացնէ Մեծարեցի բանաստեղծութիւններէն մէկը:

է	ր	ա	զ	ի	օ	ր	է	ր	վ
ա	մ	ն	ա	յ	գ	է	ր	գ	ա
ն	ա	է	ո	հ	ո	վ	ի	ն	յ
ա	ն	ք	ր	ր	է	ր	կ	ի	ր
ն	ց	ո	ի	ժ	ր	ր	դ	ա	կ
ո	ք	ւ	ի	է	ո	է	կ	ա	է
ւ	ը	ն	ծ	ո	ր	ւ	ւ	ր	ա
ն	ա	յ	ն	ւ	ձ	ա	մ	ի	ն
յ	ա	հ	ի	ւ	դ	ը	ն	ն	է
կ	ր	բ	դ	ի	ւ	թ	ա	ն	ք

«Մերծում», «Երագի Օրեր», «Այգերգ», «Անանուն», «Վայրկեան», «Կայծեր», «Նոր Տարին», «Հովին Սնցքը», «Քուն», «Հիւղը», Բիւրեղի Դիւթանք», երկ

### ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

ԽԱԶԲԱՌ (ՄՆ 320)

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	ծ	ա	մ	ա	ծ	ո	է	լ	ա	ա	պ
2	ի	ր	ա	ի	ն	ւ	է	լ	ա	ա	պ
3	ա	ի	լ	ւ	ն	ա	ա	ա	ա	ա	ա
4	մ	ա	ն	է	ա	ի	ն	ա	ա	ա	ա
5	ա	ն	ի	ք	ր	ւ	ա	ա	ի	պ	
6	ծ	2		ի	ր	ա	ն	ա	յ	ա	
7	ի	ն		լ	ն	ի	ւ	ի	ր		
8	կ	ն	մ	ւ		ա	ն	թ	ի	ա	
9	ո	ր	ա	ի		հ	ո	ա	ա	ն	
10	հ	ո	ն	ի		ո	ն	ր			
11	ա	գ	ա	հ	ն	ւ	թ	ի	ւ	ն	ի
12	կ	ն	ի	ի	ն	ւ	ա	ա	ի	պ	

ՍՈՒՏՈՒՆԵՐ (ՄՍ 319)

4	3	6	1	7	8	9	5	2
7	8	2	9	5	4	3	1	6
5	9	1	6	3	2	4	8	7
9	2	5	8	1	7	6	4	3
3	6	4	5	2	9	8	7	1
1	7	8	4	6	3	2	9	5
8	1	7	2	4	6	5	3	9
2	5	9	3	8	1	7	6	4
6	4	3	7	9	5	1	2	8

ՊԱՀՈՒՄԾ ԲԱՌ (ՄՊ 90)

Պահուած բառը՝ «Գաղտնի Ճամբան»

### ԱՆԿՐԿՆԵԼԻ...

Սկիզբ՝ էջ 7

ՀԱԼԵՊԸ ԿՎՊՐԻ... Վերադարձայ Հագագէ թաղէն, դալար ծառերով եւ կանաչ բոյսերով գարդարուած եւ նորոգուած... ԱՅՈՒ, ՀԱԼԵՊԸ ՊԻՏԻ ԱՊՐԻ...

Հալեպահայ գաղութի թիւին նուագումը, անդամներէն երեւոյթ ըլլալով հանդերձ, հոն ապրող հայրորդիք աւելի խոր գիտակցութեամբ կ'ուզէն աշխուժ պահել հասարակական կեանքը՝ յաճախակի ձեռնարկներով եւ հանդիսութիւններով: Ներկայ գտնուեցայ Յուսիկ Ա. Քիւյ. Մեղրակեանի «Վարք Քահանայից» երկհատոր աշխատասիրութեան շնորհանդէսին, օրուան թեման կրօնական եւ ընդհանրապէս պատմաբանասիրական ըլլալով հանդերձ, ներկայութեան թիւը խօսուն էր, շուրջ երկու հարիւր հոգի, Ս. Աստուածածին եկեղեցւոյ ներքնա-

սրահը գրեթէ լեցուն էր: Չգալի է, որ Սուրբոյ տաճնապալից այլ շրջաններէն՝ Եագուպիէ, Ղնեմիէ եւ Ճեգի-րի գիւղաքաղաքներէն եկուորները մասամբ մը կը լեցնեն գաղթող հալեպահայերու թողած բացը:

Կեցութեանս վերջին օրերուն քաղաքական եւ պատերազմական վիճակը Սուրբոյ հիւսիսարեւելեան շրջաններուն մէջ լաւատեսութիւն կը ներշնչէր:

Բաժանումի պահը տարբեր էր այս անգամ, յուսալից եւ խանդավառ տրամադրութեամբ ցտեսութիւն մաղթեցի, յաջորդ այցելութիւնս Հալեպի դասական մուտքով կամ օդակայանի ճամբով գալու յոյսով:

Աշնանային տաքը տանելի էր, կարօտ էի Արեւելքի արեւին, որուն ճառագայթները գարնան բնութեան կանաչ գունաւորումին հետ մեր մորթերն ալ թուփի կը վերածեն, վերագրտայ կորսնցուցած թուխս ու թուխով տրամադրուած՝ բաժնուեցայ իմ պաշտելի ծննդավայրէ:



## ԽՆՃԱՆԿԱՐ

### ԻՆՉ Կ'ԸՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ

#### ԽՈՅ



Ձեր աշխատանքին մեջ նոր մարտահրավերներու դիմաց պիտի կանգնիք: Դժուար փուլ մըն է ձեր կեանքին մեջ, բայց մի՛ յուսահատիք, լավատես եղէք:

#### ՑՈՒԼ



Գործունեայ էք եւ յաճախ կ'արժանանաք ձեր գործատիրոջ գնահատանքին: Լաւ դասաւորեցէք ձեր ժամանակը, որպէսզի ուշացում չարձանագրէք:

#### ԵՐԿՈՒՐԵԱԿ



Ձեր միջավայրին մեջ դրական դերակատարութիւն ունիք, հարցեր կը լուծէք եւ եւ ըսի ըսաներէ հեռու կը պահէք մարդիկ: Ձեր ներկայութիւնը միշտ դրական է:

#### ԽԵՑՊԵՏԻՆ



Մի՛ թերանաք ձեր ընտանեկան պարտաւորութիւններուն մէջ: Պետք է ժամանակ տրամադրէք նաեւ ձեր ընտանիքի անդամներուն:

#### ԱՌԻԾ



Ձեզմարտարարութիւններ պիտի բացայայտէք ձեր ընկերութեան մէջ: Ուշադիր եղէք, որպէսզի խաբէբայ մարդիկ ձեզ չխաբեն:

#### ԿՈՅՍ



Ձեր աշխատանքին բերումով հեռու կը մնաք հարազատներէ: Դո՛ւզատար եղէք ձեր ծնողներուն հանդէպ:

#### ԿԵՒՈՔ



Մեկէ աւելի պարտականութիւններ ստանձնած էք այս շրջանին: Դասաւորեցէք ձեր գործերը եւ մի՛ թերանաք ձեր պարտականութիւններուն մէջ:

#### ԿԱՐԻՃ



Այս շաբաթ գեղեցիկ անակկալ մը ձեզ մեծապէս պիտի ուրախացնէ: Ձեր ընկերները տօնական պիտի դարձնեն ձեր շաբաթը:

#### ԱՐԵՂՆԱՌՐ



Ձանք թափեցէք հասկնալու ձեր շուրջիններուն պայմանները եւ դժուար պարագաները: Վիրտրական խօսքեր մի՛ ուղղէք ձեր հարազատներուն:

#### ԱՅԾԵՂՋԻՐ



Ընկերային շրջանակէ հեռու կը մնաք այս շրջանին ձեր ընկճուածութեան բերումով: Մի՛նակ մի՛ մնաք, շաղուեցէք ձեր ընկերներուն հետ:

#### ՋՐՅՈՍ



Նոր գործի առաջարկ մը պիտի ստանաք: Դրական միտքերով օժտուած էք այս շրջանին:

#### ՋՈՒԿ



Նիւթական դժուարութիւններ պիտի դիմագրաւէք: Ժամանակի ընթացքին կը հարթուին բոլոր դժուարութիւնները, եւ դուք կը հասնիք ձեր նպատակին:

### ԻՆՉՈՒՒ ԶՍՐԱՆ

### ԿԸ ԹԵԼԱԴՐՈՒԻ ԶԱՄԻՉ ՈՒՏԵԼ



Չամիչը կը պարունակէ այնպիսի շերտ մը, որ կը կլանէ մեծ չափով հեղուկ: Անիկա կը բարելաւէ տեսողութիւնը, կ'ամրացնէ ոսկորները, կը կանխարգիլէ արեան տկարութիւնը եւ կ'ամրացնէ ակրաները: Չամիչի օգտագործումը թելադրելի է յատկապէս յոյ կիներուն եւ կերակրող մայրերուն:

Չամիչը, յատկապէս ճմրան ցուրտ օրերուն, անպակաս պետք է պահել մեր տուններէն, որովհետեւ չամիչը սննդարար բազմաթիւ նիւթեր կը պարունակէ, որոնց շնորհիւ ջերմութ կը հայթայթէ օրկանիզմին: Ան բաւական մեծ քանակով ածխաջրեր կը պարունակէ, հարուստ է երկաթով եւ պղինձով:

Չամիչը արթուն կը պահէ միտքը եւ յիշողութիւնը, շնորհիւ իր պարունակած B խումբի կենսանիւթերուն: Այս իսկ պատճառով չամիչը թելադրելի է ուսանողներուն եւ մտային աշխատանքով զբաղող անձներուն:

### ՍՏԵՊՂԻՆԸ ԿԸ ԿԱՆԽԱՐԳԻԼԷ ՄԱՋԱԹԱՓՈՒԹԻՒՆԸ

Ս տ ե պ ղ ի ն ու տելու կարեւորութեան մասին հաւանաբար լսած ենք մեր մանկութեան օրերէն:

Ս տ ե պ ղ ի ն ու նի նաեւ գեղագիտական յատկութիւններ: Անոր մէջ գտնուող պէթաքարոթիւնը թոյլ կու տայ երկարատեւ պահպանելու ամրան մաշկին արեւէն ստացած գոյնը, ինչպէս նաեւ մաշկը գերծ պահել կընճիւններէ:

Ստեպղինը յաճախ կ'օգտագործուի դեմքի եւ վիզի համար երիտասարդացնող դիմակներ պատրաստելու համար: Ստեպղինով կարելի է օգտակար դիմակ պատրաստել նաեւ մազերու



համար:

Դ ի մ ա կ ը կը պատրաստուի ստեպղինի թարմ քամած հիւթով, որ կը քսենք մազերուն եւ կը տարածենք գլխամաշկին վրայ:

Ստեպղինին մէջ գտնուող A կենսանիւթը կը սնուցանէ մազերը: Աւելին՝ ան թոյլ մազերուն ուժ կը հաղորդէ: Իսկ

անոր պարունակած սննդարար նիւթերը կը կանխարգիլեն մազաթափութիւնը:

Ստեպղինը կը բարելաւէ նաեւ տեսողութիւնը, իսկ Ստեպղին + կոճապղպեղ + խնձոր համադրութիւնը կը պահպանէ եւ կը զօրացնէ դիմադրողականութիւնը:

### ՍՏԵՊՂԻՆԸ ԵՒ ԼՈՒԿԸ ԿԸ ԲԱՐԵԼԱԲԵՆ ԴԷՄՔԻՆ ԳՈՅՆԸ

Չուիցերիացի գիտնականներ, հետեւելով 18-25 տարեկան երիտասարդներու սննդակարգին, յայտնաբերած են, որ որոշ պտուղներ եւ բանջարեղէններ կրնան փոխել մաշկին գոյնը:

Փորձագետներ երկու ամիս շարունակ հետեւած են 35 երիտասարդ աղջիկներու եւ տղոց սննդակարգին՝ մանրամասնօրէն գննելով անոնց դեմքի գոյնին փոփոխութիւնը: Փորձի մասնակիցները վեց շաբթուան ընթացքին կերած են միայն որոշ պտուղներ եւ բանջարեղէն:

Պարզուած է, որ այն երիտասարդները, որոնք յաճախ կերած են դեղին կամ կարմիր պտուղներ ու բանջարեղէն, անոնց մաշկին գոյնը կարմրաւուն երանգ ստացած ու աւելի գրաւիչ դարձած է: Պատճառը գունաւորող բնական նիւթերն են, որոնք առկայ են կարգ մը մթերքներու մէջ: Նման նիւթերով հարուստ են ստեպղինը, լուլիկը, խնձորը, կանաչ բանջարեղէնը եւ մանկան:





## ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

### ՅԵՏԵԵԼՈՎ...

Սկիզբ՝ էջ 9

Ահարոնեանին, կը հաստատեր. «Կորևամ ըսել, թէ ամենէն խոր անձնական տառապանքները ես կրեցի Կանտի մէջ» (Մարտ, 1914):

Այս աննպաստ պայմաններուն մէջ է ահա, որ ան նստաւ ու գրեց «Զարդը» երկարաշունչ բանաստեղծութիւնը, գոր Արշակ Զօպանեան նախ լոյս ընծայեց «Անահիտ»-ի մէջ (1907), յետոյ ալ տպեց առանձին պրակով (16 էջ, 1908, Փարիզ):

Կանտը, այնուամենայնիւ, խորացուց իր հոգին, քանի մը նոր լարեր անցուց իր քնարին վրայ, կատարելագործեց ԱՐՈՒԵՍԱԳԵՏԸ իր մէջ: Կրկնապարսկական հաստատել, որ իր յաջորդ երկու քերթողագիրքերուն («Տեղին Սիրտը» եւ «Յեթանասու Երգեր») հիւրը հո՛ս պատրաստուեցաւ:

Կանտը ճարտարարուեստի քաղաք մըն էր: Այստեղ, Վարուժան թէ՛ ժամանակակից Եւրոպայի կեանքը ճանչցաւ իր սեւով ու սպիտակով, թէ ալ տիեզերքի հնագոյն պատմութիւնները ուսումնասիրեց խորապէս: Անյագօրէն կը կարդար հնդկի գրականութենէն մինչեւ Յոմերոս, Շեքսպիր, Միլտոն, Յիւկո, Կեթօթ, Պայրըն, Մեթերլինկ, Վերհայն, Ճիւզոպոլ, Լեօպոլտի, Փեթրարքա...: Ընթերցումները, բնականաբար, կ'ընդլայնէին իր մտքի հորիզոնը, լեզուագետ կը դարձնէին զինքը: Այս մասին ունինք վկայութիւններ փրո՛Ֆ. Փիեռ Մայետի, որ իր դասընկերն եղած էր Կանտի մէջ:

Արդարեւ, 1958-ին, երբ Կանտի համալսարանի գրադարանի մուտքին բացուեց կը կատարուէր Վարուժանի յիշատակին ձօնուած դիմաքանդակին, ելոյթ ունեցողներէն մէկն ալ փրո՛Ֆ. Մայետն էր, որ կ'արտայայտուէր սապէս.

**«Երբ Վարուժան համալսարան մտաւ՝ շատ աղքատիկ Ֆրանսերէն մը ունէր: Բայց ամիսներու երկայնքին այնքան արագօրէն տիրապետեց այդ լեզուին, որ համարձակութիւնը ունեցաւ դասախօսութիւն մը կարդալու պատմութեան ամպիոնի ուսանողներուն՝ Յայաստանի անցեալին մասին:**

**... Երբեմն ինծի կը կարդար իր գրած բանաստեղծութիւնները՝ հայերէն լեզուով: Բան չէի հասկնար ատոնցմէ: Սակայն, ինք զանոնք կ'ընթերցէր այնպիսի վերացումով մը, որ զգացնէր կու տար ինծի՝ թէ գրուած էին հզօր ու գեղեցիկ շունչով...:**

Կանտէն յղուած նամակի մը մէջ, առիթով մը, Վարուժան կը գրէր. «Ամբողջ ձմեռը Պայրըն, Պոլլէր, Էրազմ, Ռոստիսոս եւ իմ սրտակից Ժ.Ժ. Ռուսօն կարդալէ վերջ, ահա կը պատրաստուիմ քննութեանց, մինչդէռ գրասեղանիս վրայ անգամ մը եւս Վերթըրը գիս կը փորձէ...: Ես Ռուսօն շատոնց է կը կարդամ, բայց այսօր միայն ըսածները կեանքիս եւ զգացումներուս խաւերուն մէջ կը փնտռեմ եւ իմ հոգիիս

### Փորձովը գինքը կը վաւերացնեն:

Սխալ պիտի չըլլայ այնպէս, ուրեմն, թէ Կանտի շնորհիւ ընդհանուր գարգացման տէր մտաւորական մը մուտք գործեց հայ գրականութեան դարպասէն ներս:

Յետեւաբար, երբ Օսմանեան Սահմանադրութեան վաղորդայնին, 1909-ին, Վարուժան Պոլիս վերադարձաւ, շուտով դարձաւ մէկը այն երկու անուններէն՝ որոնք շատ սիրուեցան հանրութենէն ու գուրգուրանքով շրջապատուեցան, - ՍԻԱՄԱՆԹՕՆ ու ԻՆԷ:

Եւ կարծեք արեան եղբայրութիւն մը կը գոյանար այս գոյգին միջեւ:

(Շարունակելի - 3)

## ԱՇԽԱՏԱՆՔԸ...

Սկիզբ՝ էջ 6

աշխատանքով կարելի է խոպան դաշտը վերածել բերրի դաշտի: Լատինները այս ուղղութեամբ կ'ըսեն. «Իւրաքանչիւր անձ իր պարտեզը պէտք է մշակէ», այսինքն՝ իր կեանքը: Իւրաքանչիւր անձ ինքնաշխատութեամբ բարձր դիրքերու կը հասնի իր կեանքին մէջ:

Ֆրանսացի փիլիսոփայ Էմմանուէլ Մուսիէ ըսած է. «Աշխատանքը կը ձգտի կատարելագործել մարդը եւ արարկան միաժամանակ»: Այս կը նշանակէ, որ երբ մէկը կ'աշխատի, թէ՛ կը բարելաւէ եւ կը կատարելագործէ իր աշխատանքը եւ թէ կը բարելաւէ ու կը կերտէ իր անձը: Աշխատանքը կը կերտէ անհատականութիւնը: Երբ պարտեզը կը մշակես, կը դառնայ բերրի եւ դու ալ՝ երբ դարձեալ կը մշակես:

Ըստ Յէկելի, ամբողջ մարդկային պատմութիւնը տիպէքթիք է: Երբ ստրուկը կ'աշխատի, փորձութիւն ձեռք կը ձգէ եւ գիտութիւն կ'ամբարեւ, եւ այնքան կը գարգանայ, որ տէրը իրմէ կախեալ կ'ըլլայ եւ ոչ թէ հակառակը: Որովհետեւ տէրը չ'աշխատի իր միայն կը հրամայէ, իսկ ստրուկին կ'աշխատի. այսպիսով կու գայ օր մը, երբ տէրը առանց ստրուկը ոչինչ կրնայ ընել: Աշխատանքով է, որ ստրուկը իր շղթան կը կտրէ եւ կ'ազատի: Այլ խօսքով, ստրուկը իր աշխատանքով տէ՛ր պիտի ըլլայ, իսկ տէրը՝ ծառայ:

Աշխատանքը արժէք ըլլալուն կողքին արժէք ծնող աղբիւր է: Աշխատանքի ճամբով է, որ մարդ ինքզինքը կը կերտէ: Աշխատանքին մէջ մարդ կը սորվի ուշադիր, համբերատար եւ յարատեւող ըլլալ: Աշխատանքով է, որ մարդ կը գօրացնէ իր կամքը եւ արժէքներ կ'իւրացնէ: Ֆրանսացի քաղաքագետ Ժան Ժորժ ըսած է. «Աշխատանքը ստեղծագործ բան մըն է, որուն մէջ կը յայտնուի մարդուն գիտակցութիւնը»: Աշխատանքը միայն ֆիզիքական շարժում չ'է, այլ ստեղծագործ բան մըն է. աշխատանքով է, որ կը գարգանանք, կը բարելաւուինք, կը ստեղծենք ու կը հնարենք:

Ուստի կու գանք այն եզրակացութեան, որ աշխատանքը չարչարանք չ'է, այլ առիթ մըն է եւ կամ պատճառ մը, որուն միջոցաւ կըրկանանք իսկական մարդ դառնալ: Զարչարանքը աշխատանքին մէջ պէտք է ժխտական նկատենք (երբ ազատ ենք), որովհետեւ աշխատանքով փորձառութիւն կը շահինք եւ անելի ինքնավստահ կ'ըլլանք:

## « Զ Ա Յ Ը » ...

Սկիզբ՝ էջ 4

բարձր լեռներից: Թարտում է, ընկնում քարի, աղբի մէջ, կեղտոտում, թելերը կտրտում: Կերակուր եւ մեկնում՝ չի ուզում: Չի սիրում ո՛չ ստորկութիւն, ո՛չ երջանկութիւն, գերադասում է տառապանք եւ ազատութիւն: Մաղձոտ է, բայց չունի գծուծ ատելութիւն, որ բարձր լեռների անձանթ գագաթում է: Գերի արծուի խոր վիշտն է իր սրտի մէջ: Սա Յայկն է, որին զրկել են իր կեանքի միակ պայմանից՝ ազատութիւնից:

Այսպէս է Յայկը: Չի՛ ուզում, որ իրան դիպչեն, մօտենան, սիրեն թէկուզ: Նա մեկուսի է, խստակեաց, բարի եւ ազատասեր:

«Ոչինչ չեմ ուզում ձեզանից, - ասում է նա իր նեղիչներին, - ձեզ լիւնի ձեր լուծը, ձեզ լիւնի ձեր երջանկութիւնը, զնացէ՛ք, ապրեցէք խաղաղ եւ երջանկիկ: Եթէ դուք սիրում էք կեանքը, ես սիրում եմ կեանքից անելի թանկ բան՝ Ազատութիւնը»:

## ՆԱԽԱՐԱՐ...

Սկիզբ՝ էջ 3

դասախօս: Մէկ ու կէս տարի առաջ դուք ալ մեր կարգավիճակով դասախօս էիք, եւ հոս անելիշատ պէտք է կոլեգիալ (գործընկերային-հմբ.), բարեկամական մթնոլորտը իշխէ, քան դիրքաւորումը», յայտնեց Ա. Մովսիսեան:

Ան դիտել տուաւ, որ զիրենք կը մտահոգէ այն, որ ամբողջ 42 էջնոց նախագիծին մէջ ընդամենը 11 տող

յատկացուած է Գիտութիւններու ազգային ակադեմիային, ամենակենսական նշանակութիւն ունեցող ոլորտներէն կրթութիւնն ու գիտութիւնը մեկտեղուած են տեղ մը, որ երբեք մեկտեղելի չ'են:

Յայաստանի Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի պատմութեան հիմնարկի տնօրէն Աշոտ Մելքոնեան ըսաւ, որ դպրոցը աւարտած շրջանաւարտը, որ այսօր գիտուր է, «բուսիկ է գիտելիքէն»: «Բաներ կան, որ պէտք է պարտադրել: Յամոզուած եմ, որ եթէ օրէնքի նախագիծի այդ կէտը մնաց, պարտադրանքը հանուեցաւ, հայոց պատմութիւնն ու հայոց լեզուն բոլոր հիմնարկներէն դուրս կու գայ», ընդգծեց ան:

Յայաստանի կրթութեան, գիտութեան, մշակութիւնի եւ մարմնակրթութեան նախարար Արայիկ Յարութիւնեան կողմ ուղղեց դասախօսներուն՝ եզրակացութիւններ կատարելու բացառապէս փաստերու հիման վրայ:

«Այս իշխանութեան հիմնական սկզբունքը եղած է, որ չկայ որեւէ հայոց, որ կարելի չ'է քննարկել, չկայ այնպիսի իրավիճակ, որ լուծումներ չ'ունի: Իմ հասցէին կը հնչեն մեղադրանքներ, որոնք կը կարծեմ ճիշդ չ'են: Եթէ մենք փափաքէինք առանց քննարկումներու հարցը առաջ տանիլ, ապա այդպէս ալ կ'ընէինք: Ես չեմ գիտեր, թէ ուրկէ բերած էք, թէ որեւէ գիշում չ'ի կրնար ըլլալ: Մենք պատրաստ ենք քննարկումի», հաստատեց ան:

Նախարարը տեղեկացուց, որ առաջարկուող օրէնսդրական փոփոխութիւններուն մասին բարձրագոյն ուսումնական հաստատութիւններուն մէջ ամփոփ որեւէ փաստաթուղթի մէջ հայոց լեզուի, հայ գրականութեան, հայոց պատմութեան դասաւանդման համար որեւէ դիտողութիւն չ'է եղած:

«Մեզի եկած են Պատմութեան հիմնարկի դիտարկումները, Բանասիրականէն ոչինչ ստացած ենք: Շատ կը ցաւիմ, որ այս ամբողջ գործընթացին մէջ կը հնչէին միակողմանի դիտարկումներ», շեշտեց նախարարը:

**«ԳԱՆՁԱՍԱՐ»**  
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹԻ ԱՆՁՆԱԿԱԶՍ

Խմբագիր՝ Զարմիկ Զիլվերշեյն-Պողիկեան  
Սրբագրիչներ՝ Զեփիւռ Պապիկեան-Աւագեան  
Յուշիկ Ղազարեան  
Ձեւաւորող՝ Յովսէփ Զալոյլեան  
Գրաշար՝ Անի Թոփալեան-Սարուխան  
Արաբերէն լուրերու թարգմանիչ՝ Մարէն Պապեան  
Կայքէջի պատասխանատու՝ Զրիստ Խրոյեան  
Լուրերու պատասխանատու՝ Լուսին Ապաճեան-Զիլվերշեյն  
Յաշուրպահ՝ Սեւակ Կիւլվանեան

- Ծանուցողներէն եւ աշխատակիցներէն կը խնդրուի ծանուցումներն ու յօդուածները խմբագրատուն ուղարկել ամենէն ուշը Երկուշաբթի օրերը:  
- Նախընտրելի է յօդուածներն ու թղթակցութիւնները ուղարկել գրաշարուած:  
- Խմբագրատուն ուղարկուած նիւթերը, հրատարակուին կամ ոչ, չ'են վերադարձուիր:  
- Խմբագրութեան վերապահուած է ստացուած յօդուածներու հրատարակելու կամ չ'հրատարակելու որոշումը:  
- Ձեր ծանուցումներն ու յայտարարութիւնները կարելի է հրապարակել «Գանձասար»-ի տպագիր տարբերակին եւ կայքէջին միջոցով:





Ռաֆֆի Միլախեան

## ՏԵՂԱԿԱՆ

### ԼՈՒՐԻՆ ՍՈՒՐԻՈՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ

-Համաշխարհային Ֆութպոլի 2022 եւ Ասիոյ ախոյեանութեան 2023-ի զուգահեռ գտման մրցումներու շրջագիծին մէջ, Սուրիոյ հաւաքականը 2-1 արդիւնքով յաջողեցաւ պարտութեան մատնել Չինաստանի կազմը: Սոյն մրցումներուն, Սուրիոյ հաւաքականը կրցաւ յաղթական աւարտել երթի բոլոր խաղերը, ապահովելով 12 կէտ, արձանագրելով 100% յաջողութիւն: Աւելցնենք, որ մրցումէն ետք Չինաստանի հաւաքականի նշանաւոր մարզիչ իտալացի Մայելլո Լիփփին հրաժարեցաւ իր պաշտօնէն:



-Տուպայի մէջ կայացած բարեկամական մրցաշարքին, Սուրիոյ ֆութպոլի ողիմպիական հաւաքականը արձանագրեց երկու պարտութիւն եւ մէկ յաղթանակ: Կազմը 2-1 արդիւնքով զիջեցաւ Արաբական Եմիրութիւններու խումբին, որմէ ետք 1-0 արդիւնքով դարձեալ կրեց պարտութիւն մը, այս անգամ Իրաքէն: Սուրիոյ հաւաքականը միակ յաղթանակը տարաւ Յորդանանին դէմ 1-0 արդիւնքով:

-Սուրիոյ պասքէթի հանրապետական տղոց բաժակի մրցումներուն, Իթթիհատի խումբը 81-68 արդիւնքով պարտութեան մատնեց Հոմսէն ժամանած Ռասայէին, իսկ ճալաա Դամասկոսի մէջ 72-68 արդիւնքով յաղթեց Ռահտէին:

## ՀԱՅԿԱԿԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՔԱԿԱՆ ԴԱՐՏՈՒԹԻՒՆ ԿՐԵՑ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՔԱԿԱՆԷՆ

Եւրո-2020-ի ընտրական մրցաշարքի նախավերջին փուլին, Հայաստանի ֆութպոլի ազգային հաւաքականը 0-1 արդիւնքով պարտուեցաւ Յունաստանի կազմէն: Երեւանի Վազգէն Սարգիսեանի անուան Հանրապետական մարզադաշտին մէջ կայացած հանդիպումին միակ կողմ արձանագրուեցաւ 35-րդ վայրկեանին Տիմիթիոս Լիմնիոսի կողմէ: Ասիկա Հայաստանի հաւաքականին առաջին մրցումն էր՝ նորանշանակ գլխաւոր մարզիչ Աբրահամ Խաչմանեանի գլխաւորութեամբ:



### ԱՐԹՈՐ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ՝ ԻՆՒՍԵՖ-Ի ԱԶԳԱՅԻՆ ԴԵՍՊԱԿ

Ողիմպիական ախոյեան, աշխարհի եռակի, Եւրոպայի քառակի ախոյեան յունահռոմեական ոճի ըմբիշ Արթուր Ալեքսանեան նշանակուեցաւ Հայաստանի Հանրապետական օլիմպիական կոմիտէի նախագահի պաշտօնին:

յաստանի Հանրապետութեան ԻՆՒՍԵՖ-ի ազգային դեսպան: Պաշտօնական արարողութիւնը տեղի ունեցաւ Շաբաթ 16 Նոյեմբերին:


Արդէն անելի քան կէտ դար է, որ ԻՆՒՍԵՖ-ի դեսպանները աշխարհի տարածքին կ'օգնեն երեխաներուն եւ կ'ինքնուրուագան պաշտպանելու իրենց իրաւունքները որպէսզի ապրին անելի բարեկեցիկ կեանք մը:



## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

### ՎԻՏԱԼԸ Կ'ՈՐԷ ԿԵՐԱԴԱՌՆԱԿ ԻՎԵՆՅՈՒՄ

Պարսելոնայի կիսապաշտպան Արթուրո Վիտալ կ'ուզէ յառաջիկայ շրջանին վերադառնալ Իտալիոյ բազմակի ախոյեան Իվէնթուսի կազմ:



Ըստ Calciomercato-ի տեղեկութիւններուն, 32-տարեկան ֆութպոլիստը փափաք ունի վերադառնալու Ա. կարգի ախոյեանութեան շարքերը, բայց իտալական ակումբի վարչակազմը ներկայիս չի մտածեր վերադարձնել Վիտալը: Միւս կողմէ իտալական այլ ակումբի՝ Ինթերի գլխաւոր մարզիչ Ալեսանդրո Քանթա, որ նախապէս մարզած է Իվէնթուսը եւ Վիտալը, ամառնային փոխադրաշրջանին բանակցութիւններ պիտի վարէ չիլիցի խաղացողին հետ:

### ՀՈՒՆԳԱՐԻՈՅ ՄԷՋ ԿԱՏԱՐՈՒԵՑԱՎ ԵՐՈՊԱՅԻ ԱՄԵՆԷՆ ՄԵԾ ԴԱՇՏԻՆ ԲԱՑՈՒՄԸ

Անցեալ շաբթուան աւարտին Հունգարիոյ մայրաքաղաքին մէջ տեղի ունեցաւ բացումը Եւրոպայի Ամենէն մեծ դաշտին, որ կը կրէր երկրորդ անգամ իտալացի Պոլշաչի անունը: Այս մարզադաշտին մէջ տեղի պիտի ունենան Եւրո 2020-ի ֆութպոլի ախոյեանութեան մրցումները:



Աւելցնենք, որ սոյն դաշտը կը համարուի Պուտափեստի երկրորդ բարձր կառոյցը՝ 52 մետր բարձրութեամբ: Պոլշաչի դաշտը նախապէս ճանցուած էր «Ժողովրդային դաշտ» անունով եւ հիմնուած է 1953-ին: Դաշտը 2016-ին փլեցին եւ անոր վերաշինութեան աշխատանքները աւարտեցան ամիսներ առաջ: 68 հազար հանդիսատես հիրընկալող դաշտին շինարարութեան համար տրամադրուեցաւ 610 միլիոն եւրո: Ան դարձաւ Եւրոպայի ամենէն սուղ մարզադաշտը:

**ՀՈԳԵՀԱՆԳԻՍ**

*Պոյաճեան ընտանիքը շնորհակալութիւն կը յայտնէ բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով, նուիրատուութեամբ կամ հեռաձայնով մասնակից դարձան իրենց կնոջ, մօր եւ հարազատին՝*

**ՀԱՆԳՈՒՅԵԱԿ**  
**ՎԱՆՈՒՀԻ ՊՈՅԱՃԵԱՆԻ**  
(Ծնեալ՝ ԲԷՊԱՊՃԵԱՆ)

*մահուան սուգին:*  
Հանգուցեալի քառասունքի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 24 Նոյեմբեր 2019-ին, յաւարտ Ս. եւ Անմահ Պատարագի, Ս. Աստուածածին եկեղեցոյ մէջ, Վիլլաներ -Հայկա:

Յետ հոգեհանգստեան արարողութեան ցաւակցութիւնները պիտի ընդունուին եկեղեցոյ ներքնասրահէն ներս:

Երկուշաբթի 25/11	Երեքշաբթի 26/11	Չորեքշաբթի 27/11	Հինգշաբթի 28/11	Ուրբաթ 29/11	Շաբաթ 30/11	Կիրակի 1/12
8° 18°	8° 17°	8° 16°	9° 16°	6° 15°	7° 16°	6° 16°





## ՀԱՍՏՁՎԱՅԻՆ ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՄԸ՝ ԼԵՆՈՆ ՇԱՆՔԻ ՏՆԵՂԵԱՆ 150-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

Կիրակի, 17 Նոյեմբեր 2019-ի երեկոյան, Հալեպի «Գ. Եսայեան» սրահին ներս բացուեցաւ առաջին վարագոյրը Լենոն Շանթի «Եսի Մարդը» թատերգութեան ներկայացման, հովանաւորութեամբ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գեր. Տ. Մասիս Ս. Եպս. Զօպուեանի, կազմակերպութեամբ Համագայիսի Սուրիոյ Շրջ. Վարչութեան «Լենոն Շանթ» Թատերական Միաւորին: Ներկայացման կազմակերպիչները մուտքին իրենց բաժնած գրքոյկին մէջ արձանագրած են, որ սոյն ներկայացումը նուիրուած է թատերգութեան հեղինակին՝ Հայ Թատերագրութեան Իշխան եւ Համագայիսի հիմնադիր Լենոն Շանթի ծննդեան 150-ամեակին: Դերակատարներու եւ թեքնիք կազմի անուանացանկէն արդէն իսկ կը բացայայտուի, որ ներկայացումը իրականացած է զուտ տեղական ուժերով՝ դերակատարներէն մինչեւ բեմադրիչը՝ Յուշիկ Ղազարեան, որ Միաւորի անդամներէն է: Նոյնի՛սկ երաժշտութիւնը յորինած է հալեպահայ երիտասարդ երաժիշտ Յովիկ Օհանեանը՝ յատուկ այս ներկայացման համար, ինչ որ նորութիւն է հալեպահայ բեմին համար: Յատուկ երաժշտութիւնը միակ նորութիւնը չէ այս իւրայատուկ ներկայացման: Բեմականացման աշխատանքին մէջ, հիմնական տիպարներուն կողքին, ներգրաւուած էին մեծ թիւով պատանիներ, որոնք կենդանի պատկերներու միջոցաւ արտայայտեցին ներկայացման հիմնական գաղափարը, ինչպէս նաեւ մարմնաւորեցին տիպարներու հոգեվիճակներն ու յուզումները:

«Եսի Մարդը» թատերգութիւնը Լենոն Շանթի այն թատերգութիւններէն է, որ կը ներկայացնէ հեղինակին ժամանակակից շրջանը: Հոն ներկայացուած է երիտասարդ յեղափոխական գործիչը՝ Սեդրաք (դերակատար Սագօ Խալոյեան) եւ իր ընկերը՝ Շահան (դերակատար Նագօ Ատուրեան), որոնք յանձն առած են մաքրել դաւաճան Մուշեղին (դերակատար Շանթ

Ուրիշիկեան) հաշիւը: Սակայն Սեդրաք ներքին բախումի վիճակի մէջ է, որովհետեւ Մուշեղ նախապէս ինք նաեւ եղած է յեղափոխական գործիչ եւ Սեդրաքին խտելալը: Աւելին՝ Մուշեղի այրի քրոջ (դերակատար Լենա Զսաճիկեան) դուստրը՝ Արաքսի (դերակատար Սարին Հայրապետեան), Սեդրաքին առաջին սերը եղած է, իսկ Սեդրաքին քոյրը՝ Ազնիւր (դերակատար Յուշիկ Ղազարեան) նոյնպէս զգացումներ ունի Մուշեղին հանդէպ: Լենոն Շանթ, ստեղծելով այսպիսի բարդ հոգեվիճակներ, խորասուզուած է մարդկային հոգիին խորքերը՝ բացայայտելու համար ՄԱՐԴ արարածի հոգիին իսկական եութիւնը: Սեղմ տողերու մէջ ներկայացուած են տեսակաւոր տիպարներ, սկսեալ Մուշեղին օգնական Աբրահամէն (դերակատար Յովիկ Ղազարեան), որ կը ներկայացնէ պատեհապաշտ շահամուլը, մինչեւ գաղափարի նուիրեալ երիտասարդը: Այս բոլորը հանդիսատեսին առջեւ կը բացայայտուին Լենոն Շանթի դաւանած գաղափարաբանութեան ֆոնին վրայ:

Թատերախումբը բաւական յաջողած էր այս բոլորը ներկայացնել: Իւրաքանչիւր մանրամասնութիւն խնամքով աշխատուած էր. ուշագրաւ էին նաեւ իւրայատուկ որմնագործ, գոր պատրաստած էր Յովսէփ Զալօլեանը, ինչպէս նաեւ ներկայացման նախօրեակի քարոզարշաւը՝ դիմատետրի միջոցով:

Երիտասարդ կազմին ողջունելի մէկ քայլն էր, Համագայիսի իսկական առաքելութեան համահունչ՝ ներկայացում մը հրամցնել արդիական ոճով, հաւատարիմ մնալով անանդականին: Ներկայ հանդիսատեսներուն բուն ծափահարութիւնը ամենէն մեծ վկայութիւնն էր ներկայացման յաջողութեան:

Թատերգութիւնը պիտի ներկայացուի երկրորդ անգամ յառաջիկայ Կիրակի եւս՝ 24 Նոյեմբեր 2019-ին:

**Թղթակից**

